



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (166)

10 հոկտեմբեր 2019

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱՐԿՆԵՐՆ ԵՆ Ե

Ազգային երաժշտության ուժը-Բանգկոկ



Թաիլանդի Թագավորությունում Հայաստանի Պատվավոր Յուրատոս Արտո Արթինյան, քանոնահարուհի, «Երևան» քառյակի հիմնադիր և ղեկավար Անուշ Կիրակոսյան, Յուրատոսարանի հյուրասենյակ-գրադարանում, Ա. Կիրակոսյանը Յուրատոսին է նվիրում «Երաժշտական Հայաստան» ամսագրի հոբելյանական՝ 90-րդ համարը

5

ՄԵՉ ԾԱՆՈԹ - ԱՆԾԱՆՈԹ ԿՈՄԻՏԱՍԸ՝ «ՏԱՂԱՐԱՆԻ» ՀԱՄԵՐԳԻՆ



Սեդրակ Երկանյան

3

«ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ» Նվիրվում է կոմպոզիտորի ծննդյան 90-ամյակին



2019 թվականը շարունակվում է Կոմիտասի և Թունանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված հոբելյաններով: Եվ ականավոր արվեստագետների հոբելյանների շարքը զուգահեռաբար համարվում է ըստ ծննդյան ամսաթվերի Գոհար Գասպարյանի, Լևոն Շանթի, Ավետ Տերտերյանի, Գևորգ Եմինի:

2

Ջեննի Ասատրյանի 70-ամյա հոբելյանին Չգապուլսների մախրությունը...



Նանա Մարգարյան, Ջեննի Ասատրյան

3

✓ Միավորված աշխարհներ մեկ մթնոլորտում

7

✓ Պատանի կոմպոզիտորները մեծ դասականի սանը

8

Կոմիտաս միզապագային գիտաժողով-փառասուն՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին



Պետական այրեր, եկեղեցականներ, մտավորականներ և արվեստասերներ այցելեցին Կոմիտասի անվ. այգու պանթոն՝ ծաղիկներ խոնարհելով հայ կոմպոզիտորական արվեստի հիմնադրի շիրմին 26.09.2019 թ.

Կոմիտաս վարդապետի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 26-ին, մի խումբ պետական այրեր, եկեղեցականներ, մտավորականներ և արվեստասերներ այցելեցին Կոմիտասի անվան այգու պանթոն՝ ծաղիկներ խոնարհելով հայ կոմպոզիտորական արվեստի հիմնադրի շիրմին: Այնուհետև կատարվեց հոգեհանգստի կարգ:

Կոմիտաս վարդապետի հոգու խաղաղության համար աղոթք հնչեցրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը:

«Կոմիտաս վարդապետն արդեն շուրջ մեկ դար իր հայրենաբույր և սրբազան երգով հատել է ժամանակի և տարածության սահմանները՝ հայկական ինքնության արձաններից սնվող ու արդյունավորվող ստեղծագործությամբ դառնալով գրուցակիցը հայ և այլազգի երաժշտասեր յուրաքանչյուր անձի հոգու ապրումներին», - ասաց Վեհափառը: Նա ընդգծեց, որ Կոմիտասն Աստծո, Եկեղեցու և Հայրենիքի հանդեպ իր անսասան հավատով մաքրեց ու հայացրեց մեր երգը, ստեղծեց այն հոգևոր պարարտ անդաստանը, որտեղ հայը հավիտենապես ճանաչում է իր հոգևոր «ես»ը, առերեսվում դարերի խորքից հնչող հայրապետների ու վարդապետների նվիրական աղոթքին, հայրենաշունչ և խրոխտ նախնայազգացումներին, շինականի անկեղծ ու ստեղծագործ հորովելին:

6

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՊԿ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ. ԷՌԱ ԲԱՐՈՒՏՉԵՎԱ



Ն. Կ. Թահմիզյան, Մ. Ա. Տոնյան, Կ. Սիմոնյան, Է. Ս. Բարրուտչևա, Գ. Գ. Տիգրանով, Մ. Գ. Հարությունյան, Ա. Ա. Աթայան ԵՊԿ շրջանավարտները իրենց ղեկավարների հետ, Երևան, 1956 թ.

9



Տոֆա Ազնաուրյան, Արամ Տաթյան

Верность призванию

4

✓ Ո՞վ է եղել Տերյանի սրտի թագուհին

9

✓ Ազնավորի մանկության թաղամասում կենդանուկի նրա կիսանդրին

10

ԵՐԲ Է ԳՎԼՈՒ ԿԿԵՏ ՏԵՐՏԵՐՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԸ



Արամ Ավակյան, հրապարակախոս՝ Դավանանքի Երանյան



Մարգարիտա Ռուխկյան արվեստագիտության դոկտոր, Ա. Տերտերյանի գրքի հեղինակ



Շովիմար Մովսիսյան ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր, Արմինե Պողոսյան Կ. Սարաջյանի անվ. ՄԵԴ-ի տնօրեն, Անուշ Կիրակոսյան քանոնահարուհի, լրագրող

պոզիտիվների միության Դիլիջանի ստեղծագործական տան 10-րդ քոթեջում՝ նրա առաջարկով: Ուսանողներին հարցնում էր՝ իսկ դուք լսել եք իմ, ասենք՝ 6-րդ սիմֆոնիան, ու... հայտնվում էինք Դիլիջանում: Իսկ նրա ստեղծագործությունների լսումներին հեղինակի ներկայությունը աննկարագելի խորհրդավորություն էր հաղորդում...»: <https://www.aravot.am/2019/10/03/1069605/>:

1 Գրականության 1-ին՝ երաժշտի միջազգային օրը, ԵՊԿ-ի 4-րդ հարկի դահլիճում կայացավ գրող, թատերագետ, հրապարակախոս, 31-ով հեռարձակվող «Գորոցներ» հաղորդաշարի, հայ մեծերին ներկայացնող մի քանի տասնյակ փաստագրական ֆիլմերի հեղինակ Դավանանքի Երանյանի հաղորդման ցուցադրությունը, որը 2009-ին նկարահանել էր՝ անվանի գործիչների խոսքը Տերտերյանի մասին, նվիրված կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակին: Եվ 10 տարի հետո կոմպոզիտորի 90-ամյակին նվիրված հանդիպմանը ցուցադրվեց: Հաղորդման տեսագրությունն Ի. Գ. Տերտերյանի նվիրել էր երաժշտագետ, հրատարակիչ և Ռ. Տերտերյանի «Ա. Տերտերյան. Երկխոսություններ» պատկերազարդ-գրքի մտահղացման հեղինակ Գոհար Շազոյանին, ասելով. «Նվիրում եմ այս տեսա-հղովակը լավ օրվա համար, որպեսզի դուք ցուցադրեք»: Այն ցուցադրվել է միայն Սփյուռքի համար գիշերային թողարկումներով, և 90-ամյակին այս հրավերը կազմակերպվեց հենց այս նպատակով Գոհար Շազոյանի կողմից: Մեծանուն կոմպոզիտորի երազանքն էր Այրավանում՝ իր առանձնատանն ու շրջակա Սևանի տարածքում անցկաց-

րակշռում են խոսքերը, քան հնչող երաժշտությունը, այն ակնկալիքով, որ բոլոր ելույթ ունեցողները այն արվեստագետներն են, որոնց հետ անցել է Ավետ Տերտերյանի կյանքը կամ նրա երաժշտության համակրողներն ու գնահատողներն են: Միջոցառմանը հրավիրվել էին այն գործիչները, որոնք ներդրում ունեին վերջին 10-տարիների ընթացքում: Հանդիպման նպատակն էր յուրաքանչյուրի դերը տերտերյանական երաժշտության տարածման գործում և իհարկե հաղորդակցվելու այդ օրը նրա արվեստի հետ: Արվեստագիտության թեկնածու, Երևանի կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր Շովիմար Մովսիսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ թեև ինքը Տերտերյանի ուսանող չի եղել, բայց բազմաթիվ են եղել շփումները կոմպոզիտորի հետ. «Իմ համար թանկ է կոմպոզիտորի նվիրած «Ավետ Տերտերյան-երկխոսություններ» գիրքը՝ հեղինակի հետևյալ մակագրությամբ՝ «ի հիշատակ մեր սիրու...»: Իր հուշերում նա շեշտեց. «Առանձնակի տպավորիչ էր մեր վերջին զրույցը, երբ նա մտախոհություն էր հայտնում՝ ձեռնամուխ լինել, գրել, թե՛ ոչ իր 9-րդ սիմֆոնիան: Հանձարեղ կոմպոզիտորների, այդ թվում՝ Շուրեթի, Բեթովենի, Մա-

րի ծայնագրությունների իրականացումը) մեկնաբանմանը անդրադարձներ եղել են Տերտերյանի սիմֆոնիաներին: «Կրակե օղակ» օպերան ժամանակին ներկայացվել է Շուշիում և Երևանում հանձին Սարինա Ավթանդիլյանի բեմադրությունների, ով նաև ներկա էր մշակած հանդիպմանը: Տերտերյանի սիմֆոնիաները պարբերաբար վերջին 3 տարիների ընթացքում հնչեցրել է դիրիժոր Ռուբեն Ասատրյանը՝ հավատարիմ մնալով տիգրանովյանական-տերտերյանական արվեստակիրների ավանդույթին, այն է՝ մշտապես և ամենուր տարածել կոմպոզիտորի ստեղծագործությունները: Դիրիժորը օրերս էր վերադարձել Սանկտ-Պետերբուրգից, որտեղ տեղի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ ղեկավարել է Տերտերյանի 5-րդ և 7-րդ սիմֆոնիաները: Նաև կիսվեց իր 2-րդ սիմֆոնիայի կատարումով արդեն պարբերաբար մշակող «Տերտերյանի ժամանակը» թվով 4-րդ փառատոնային մեկ օրով համերգի ժամանակ այս անգամ 2-րդ սիմֆոնիայով:

Միջոցառմանը ներկա էին և իրենց հետաքրքիր ծրագրերով ու անելիքներով կիսվեցին արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանը, ով Ավետ Տերտերյան մենագրության հեղինակն է: Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Ավետիսյանը, ով ջանում է 2-րդ փառատոնից սկսած գրեթե յուրաքանչյուր տարի նախաձեռնել փառատոնը և որևէ անընդհատվածություն տալ միջազգային փառատոնին: Ներկա էր և իր ջերմ խոսքն ուղղեց հավաքվածներին Տիգրանովյանի մտերիմ, դաշնակահարուհի, Ղ. Սարյանի անվ. ՄԱԴ ուսուցչուհի Սիլվա Բաբայանը, ով իր արվեստով մշտաբար է պահում Տիգրանովյանի հիշատակը: Այս տարի 4, Սարաջյանի անվ. ՄԵԴ հետ կարողացանք կազմակերպել հուլիսի 29-ին դպրոցի ուսուցչուհի, անվանի քանոնահարուհի Անուշ Կիրակոսյանի մասնակցությամբ և իր կազմակերպած ժողովրդական գործիքների դպրոցականների անսամբլի հետ զալա համերգ Այրավանի ամառանոցում: Եվ՝ Տ. Գնելի, և՛ Տ. Գևորգ Գևորգյանի հետ նախապես պայմանավորված իրականացրեցինք Հայավանքի եկեղեցում Տերտերյանին նվիրված արարողակարգը, որտեղ ներկա էին թոռնուհին՝ Մարիա Տերտերյանը և Ռ. Տերտերյանի կինը՝ երաժշտագետ Հասմիկ Տերտերյանը, ԳԿՄ նախագահ Արամ Սաթյանը, նկարիչ Հարթմանակ Հարությունյանը ընտանիքով և «ԵՊԿ հրատարակչությունը» (տես՝ «Երաժիշտ» ամսաթերթի 7-8 համարը):



Պաշտակալների, Ղ. Սարյանի անվ. ՄԱԴ-ի ուսուցչուհի Սիլվա Բաբայան, Նարինե Ջարիֆյան (Տերտերյանի անվ.), Մարգարիտա Ռուխկյան



Ալինա Փահլևանյան, Լիլիթ Եփրեմյան, Արմինե Պողոսյան, Անուշ Կիրակոսյան, Երվանդ Երկանյան, Սոֆա Ազնուրյան, Մարգարիտա Ռուխկյան, Աննա Արևշատյան, Սարինա Ավթանդիլյան

նել փառատոն, որը իրականություն դարձավ 2015-ին նաև Ցեղասպանության 100-ամյա տարելիցի խորհրդով: Միջոցառմանը ներկա էին նաև ճանաչված երաժիշտներ արտասահմանից, մոսկովյան «Կուլտուրա» TV-ն ժապավենին հանձնեց փառատոնային միջոցառումները, կինոռեժիսոր Ռուբեն Քոչարի նկարահանած ֆիլմը որպես զեղեցիկ հուշ մնաց և իրականացավ կոմպոզիտորի երազած փառատոնը, որի մասին և նկարահանված է սույն հաղորդումը հենց Այրավանում, այնուհետև լրացված տարբեր ժամանակների հարցազրույցներով, նյութերով, որոնք տրամադրել էր հաղորդման համար Իրինա Տիգրանովյան, ուստի ֆիլմում գե-

լերի կյանքում հենց թվով 9-րդ սիմֆոնիան է եղել ճակատագրական. նրանք դրանից հետո հրաժեշտ են տվել երկրային կյանքին... Ես վստահ եմ, որ Տերտերյանի ժամանակը դեռ նոր է գալու, և ո՞վ գիտե զուցե տարօրինակ հնչի, բայց կոմպոզիտորի 8 սիմֆոնիաները ունկնդրելուց հետո լսում եմ 9-րդը... Գուցե դա հետևանք է ժամանակին իմ ու կոմպոզիտորի զրույցների՝ սեփական ապրումների, տարբեր հոգեվիճակների, մեր ապրած բարդ ժամանակաշրջանի մասին... Խիստ ու ազդեցիկ արտաքինով Տերտերյանի շփումը շրջապատի հետ անմիջական էր: Քանիցս համակուրսեցիներիս հետ ունկնդրել եմ նրա սիմֆոնիաները Կոմ-

պես պայմանավորված իրականացրեցինք Հայավանքի եկեղեցում Տերտերյանին նվիրված արարողակարգը, որտեղ ներկա էին թոռնուհին՝ Մարիա Տերտերյանը և Ռ. Տերտերյանի կինը՝ երաժշտագետ Հասմիկ Տերտերյանը, ԳԿՄ նախագահ Արամ Սաթյանը, նկարիչ Հարթմանակ Հարությունյանը ընտանիքով և «ԵՊԿ հրատարակչությունը» (տես՝ «Երաժիշտ» ամսաթերթի 7-8 համարը):

ԳՐԱՐ ԸՆԳՈՅԱՆ ԵՐԱՇՄԱԳԵՆ

Հայ օպերային երգչուհին Լիբանանի Golden Voices մրցույթի հաղթող է չախաչվել

Լիբանանաբնակ օպերային երգչուհի Կլարա Ալիխանյան-Աղամյանը Բեյրութում կայացած «Golden Voices Lebanon» երաժշտական մրցույթում նվաճել է հաղթողի տիտղոսը: Երգչուհին ծնվել է Գյումրիում, գերագանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժինը (պրոֆեսոր Կարինե Սկրտչյանի դասարան): 2015 թվականից ապրում է Բեյրութում և ակտիվ երաժշտական գործունեություն է ծավալում հայ համայնքում: «Golden Voices» ֆրանսիական միջազգային նախագիծ է, որն առաջին անգամ էր անցկացվում Լիբանանում: Նախագծին մասնակցում էին տարբեր տարիքային խմբերի շուրջ 200 երգիչներ: «Մրցույթին մասնակցող միակ օպերային երգչուհին էի: Ինքս իմ ուժերի վրա վստահ էի, բայց արդյունքն անսպասելի էր: Չէի սպասում, որ Լիբանանում, որտեղ հիմնականում արաբական երաժշտություն են լսում,

կհաղթի օպերան», - նշել է երգչուհին: Մրցույթն անցկացվել է երկու փուլով: Յուրաքանչյուր մասնակից ներկայացրել է մեկ երգ: Կլարա Ալիխանյան-Աղամյանը մրցույթի միակ հայ մասնակիցն էր: Նա կատարել է Քրիստոֆ Վիլիբալդ Գյուլկի «J'ai perdu mon Eurýdice» արիան «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայից:

Ինչպես նշել է Կ. Ալիխանյանը. «Հպարտ եմ, որ լիբանանյան բեմից հայկական ազգանուն հնչեց: Ամենաշատը ուրախ եմ հենց դրա համար: Աշխարհի որ ծայրում էլ լինեմ, որտեղ էլ բեմ բարձրանամ, փառքի համար բեմական կեղծանուններ չեմ վերցնի, հայկական ազգանունս չեմ փոխի»:

Նյութը վերցված է <https://anmmedia.am/hy/news/armenian-singer-wins-golden-voices-kayegh,պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ>



Կլարա Ալիխանյան-Աղամյան

Ձեննի Ասատրյանի 70-ամյա հորեյակին Չգապմունքների մաքրությունը...

1 Օրերս «ՀԲԸՍ» համերգասրահում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հովանու ներքո, ինչպես նաև Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ «Պատմություն կերտելով...» հորեյակական համերգաշարի շրջանակներում կայացավ կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆուլկլորի ամբիոնի դասախոս, դոցենտ, միջազգային մրցույթի դափնեկիր Ձեննի Ասատրյանի հորեյակական երեկոն:

Հորեյակահիմն իրենց ողջույնի խոսքը հղեցին ՀԿՄ նախագահ՝ Արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆեսոր, կոմպոզիտոր Արամ Սաթյանը, ԵՊԿ ֆուլկլորագիտության ամբիոնի պրոֆեսոր Ալինա Փահլևանյանը՝ մշելով հայ երախտավոր Ձեննի Ասատրյանի անցած բեղմնավոր ստեղծագործական ուղու և զեղագիտական ճաշակի մասին, որը մարմնավորվել է իր սեփական արվեստում:

Համերգը համարված էր տեսանյութերով, որոնք վկա-

րինել երգեր և փոքրիկ պարեր:

Այն ժամանակվա դպրոցի սնօրեն Թորոս Լավչյանը նկատելով աղջկա ստեղծագործական ավյունը, կոմպոզիտոր Էմին Արիստակեսյանին իրավիքում է դպրոցում դասավանդելու կոմպոզիցիա առարկան:

Ի դեպ մշեմբ, որ տաղանդավոր աշակերտուհուն իր մանկության տարիներին նկատել է նաև Առնո Բաբաջանյանը:

Բանն այն էր, որ փոքրիկ Ձեննին իր տանը չունեի սեփական դաշնամուր և շատ դեպքերում ստիպված էր լինում պարապել երաժշտական դպրոցում:

Եվ մի օր, մեծ կոմպոզիտորը, հաշվի առնելով աղջկա ի ծնե տված շնորհալիությունն ու ջանասիրությունը, Ձեննիին նվիրում է մի գեղեցիկ դաշնամուր, որն, ինչ խոսք, դարձավ ճակատագրական նրա հետագա կյանքում:

Երաժշտական դպրոցն ավարտելուն պես սկսվեցին Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի (Էդվարդ Բաղդասարյանի

ծական խառնվածքին բնորոշ հակումները դեպի տարբեր արևելահայ և արևմտահայ բանաստեղծների երկերը, ինչպես օրինակ Թումանյանն ու Մեծարենցը, քանզի մարդն ու բնությունը նրա պատկերացմամբ՝ «դրանք սիրո մի քնքշագույն արեգակ են, անուրջների երերանք»:

Գեղարվեստագետի աշխարհըմբռնումների կենտրոնում են նաև խորը փիլիսոփայական մտորումներն ու մաքառումները դեպի կյանքն ու լինելիությունը, դեպի Տիեզերքը:

Հորեյակական երեկոյին, ուր հնչեցին կոմպոզիտորի «Ձարթոնք», «Սոնատ-Պաստորալ», «Վոկալ-գործիքային» պատկերներ, «Արձագանք», «Pastoral» կամերային ստեղծագործությունները, իրենց անմատուր նվիրաբերումը ցուցաբերեցին նաև երաժիշտ-կատարողներ՝ Անահիտ Դիլբարյանը (դաշնամուր), Նարեկ Ավագյանը (ֆլեյտա), Լուիզա Երեմյանը (սոպրանո), Սամսոն Թաթոսյանը (թավջութակ):

Նրանք գրավեցին լսարանը իրենց բեմական, զեղարվեստական պարզությամբ, ստեղծած կերպարների հնայ-



Նարեկ Ավագյան



Վլադիմիր Գրիգորյան, Ֆլորա Բաղդասարյան, Դավիթ Դազարյան, Անահիտ Բաղդասարյան, Ալինա Փահլևանյան, Ձեննի Ասատրյան



Մարինա Սեմյոնովա, Նանա Մարգարյան, Ձեննի Ասատրյան

յուն էին Ձեննի Ասատրյանի կենսագրական ուղին և լինելիությունը հայ մշակույթում:

Ձեննի Գեղամի Ասատրյանը ծնվել է 1949 թ. Երևանում՝ մանկավարժների ընտանիքում: Ծնողները նկատելով, որ աղջնակը մեծ սեր ունի դեպի երաժշտությունը, նրան տանում են Քանաքեռի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտական դպրոց՝ սովորելու դաշնամուրային բաժնում:

Իսկ ի՞նչ պատահեց հետո, դա գրեթե անենահետաքրքիր էր փոքրիկ Ձեննիի կյանքում:

Երաժշտական դպրոցում սովորելու տարիներին Ձեննին ոչ միայն սովորում է նվագել դաշնամուր, այլև սկսում է հո-

դասարան), ապա Երևանի պետական կոնսերվատորիայի (Գրիգոր Եղիազարյանի դասարան) ուսումնառության շրջանները, ուր իր տաղանդավոր համախոհ-ուսուցիչների հետ երիտասարդ Ձեննին սկսեց կերտել հայ մասնագիտացված երաժշտության հիմքերը:

Խոսելիս Ձեննի Ասատրյանի բազմաթիվ և բազմաժանր ստեղծագործությունների մասին պետք է խոստովանել այն փաստը, որ նա թե իր ստեղծագործական նկրտումներով, և թե՛ մարդկային հատկանիշներով վեհ և բացառապես խոհեմ է իր արտահայտչամիջոցներում ու դրսևորումներում:

Այդ տեսակետից պատահական չեն նաև իր բանաստեղ-

քով, ցայտունությամբ և երաժշտականությամբ:

Իսկ Ձեննի Ասատրյանի կերտած կոմիտասյան խոսքերով «3 երգ սիրո մասին» տեսահոլովակը և Ֆանտազիա «Կոմիտասյան մեղեդիներ» տեսաֆիլմը (ռեժիսոր՝ Արսեն Ավանյան) եզրափակեցին երեկոն, որում առկա էր Մեծն Կոմիտասի վեհաշուք և խորհրդավոր պատգամը՝ «Լինել բնատուր և անարատ...»:

ՆԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Երաժշտագետ,
ԵՊԿ թանգրանի վարիչ

ՄԵԶ ԾՂՆՈԹ - ԱՆԾՂՆՈԹ ԿՈՄԻՏԱՅԱՆԸ՝ «ՏԱՂԱՐԱՆԻ» ՀՎՄԵՐԳԻՆ

1 Հնագույն երաժշտության «Տաղարան» անամբիլ համերգը Կոմիտասի ծննդյան օրն էր, և անբողջությամբ ներկայացնում էր նրա ստեղծագործությունը՝ ներառյալ մեծ կոմպոզիտորի թողած հոգևոր ժառանգության միջև օրս անհայտ էջերը:

Կոմիտասյան մշակույթային «տարվա» փայլուն իրադարձություններից էր «Տաղարան» անամբիլի՝ հոկտեմբերի 26-ին կայացած համերգը, որն իր տեսակի մեջ պետք է դասել ոչ միայն արվեստի առումով գերազանց, այլև նորույթ բերող, Կոմիտասի կերպարի ու թողած հարուստ ժառանգության ճանաչելության սահմաններն ընդլայնող երևույթների շարքը:

1896-1899 թթ. Բեռլինում ուսանելու տարիներին Կոմիտասի որոնումների և եվրոպական մշակույթի ուսումնասիրությունների, մասնավորապես՝ գերմանական պոեզիայի մեջ խորանուխ լինելու արդյունք էին գերմաներենով գրված երգերը, որոնց գոյության մասին լայն շրջանակների հանրությունը տեղյակ չէ: Եվ ահա, Մանեստրո Սեդրակ Երկանյանը դրանք բեմ է հանել՝ արվեստասեր հանրության ունկնդրությանը ներկայացնելով Կոմիտասի ստեղծագործության անհայտ էջերը: Գերմաներենով գրված ստեղծագործությունները բոլորովին չեն տարբերվում գերմանացի հանձարների ստեղծածներից՝ համոզվումք է հայտնում Մանես-

տր Սեդրակ Երկանյանը: «Լարային քառյակներ, բոլորովին անհայտ դաշնամուրային պիեսներ, երգեր», - կոմիտասյան ժառանգության գանձարանի այս էջերի բնագրերը գտնվել են Գրականության և արվեստի թանգարանում: Դրանք հայտնաբերել և վերծանել է Տիրան Լոքմազյոզյանը 1991-ին, իսկ նույնպիսի ժողովածուով տպագրվել են միայն այս տարի:

Համերգի 1-ին բաժինը սկսվեց դաշնամուրի համար գրված երկու պիեսի կատարմամբ: Մանեստրոյի դաշնամուրային մեկնաբանմամբ նյութը ներկայացվեց ճշգրիտ ու բազմակողմանի՝ մեղեդիների բազմաբանգությամբ: Կոմիտասը դրանք կառուցել է նրբությամբ և շոշափելի գունբանգներով: Պատկերներ են, որոնցում կոմպոզիտորը դրել է գեղարվեստական բովանդակություն, և ինչը կատարելապես հաղորդեց դաշնակահարը:

Բայց սա Մանեստրոյի միակ դաշնամուրային մենամկազը չէր այս համերգին: Հարություն Դելլալյանի «Նվիրում Կոմիտասին» սոնատը՝ դաշնամուրի և ծայրի համար, «բարձրակետը» պետք է համարել: Կոմիտասյան կերպարի այդպիսի երաժշտական դիպուկ, խորը, ազդեցիկ մեկնություն, հուզականության իրար հաջորդող բոլոր մեղմ ու ահագնացող շեշտադրումներով, էքսպրեսիվ արվեստի ցայտուններով, տեխնիկական հեղինակային նորանվածություններ կիրառումով այս գործը երկանյանական կատարողական արվեստի գլուխգործոցներից է երիցս արժանի այս ստեղծագործության հեղինակային մտախղացման մեկնաբաններից մեկը համարվելու:

Բեռլինում ուսանելիս Կոմիտասը արևմտաեվրոպական դասական երաժշտության ոճով գրել է թե՛ դաշնամուրային մանրանվագներ և թե՛ պիեսներ լա-

րային քառյակի համար, որոնցից համերգային ծրագրում ընդգրկված էր երեքը: Այն կատարեցին Քրիստինե Զթյանը (1-ին ջութակ), Ստեփան Մատիսյանը (2-րդ ջութակ), Լիլիթ Վարդանյանը (ալտ) և Հովիվ Օգանձովը (թավջութակ): Այս գործերում երևում է մի այլ Կոմիտաս, որ տիրապետում է եվրոպական կոմպոզիտորական արվեստի բարդություններին և կարող է այդ ոճով ազատորեն ստեղծագործել: Կարելի է ասել նաև, որ սա մի փորձարարական շրջան է եղել Կոմիտասի համար, որի արդյունքում ստեղծված երկերը երկար ժամանակ մնացել են անհայտ, մինչև «Տաղարանի» կողմից 1-ին բեմական կատարումները:

11

Դրանք անհայտ չենք կարող համարել, քանի որ Տիրան Լոքմազյոզյանը 20-30 տարի շարունակ իր կատարումներով պրոպագանդել է և լինելով հանրահայտ երգիչ, հնչեցրել է Կոմիտասի գերմանական մեներգերը, իսկ խմբերգերը տրամադրել Հայդելբերգի համալսարանի երգչախմբին և նրանք տարիներ առաջ համերգներով բացի Գերմանիայում հանդես գալուց, նաև Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը համատեղ համերգ ունեցան 1990-ականներին: Այս տարի Ե. Զարեմցի անվ. ԳԱԹ-ում տեղի ունեցավ Տ. Լոքմազյոզյանի կազմած (2 տպագրությամբ՝ գերմաներենով և հայերենով) Կոմիտասի գերմանական երկերի լիակատար ժողովածուի շնորհանդեսը (ներկայացրել է երաժշտագետ Գ. Շադոյանը): 1-ին անգամ դաշնամուրային ստեղծագործությունները հնչեցրեց դաշնակահար և կոմպոզիտոր Հովհաննես Մանուկյանը, իսկ մեներգերը՝ Տ. Լոքմազյոզյանը, ով 1990-ականներից առ այսօր հնչեցրել է թե՛ Գերմանիայում, թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում: Վերջինս, ի դեպ, Կոմիտասի կենսագրությունը և գործունեությունը թուրքերենով 1-ին անգամ հրատարակել է իր հեղինակությամբ Թուրքիայում:

Խմբագրական



Քրիստինե Զթյան, Ստեփան Մատիսյան, Հովիվ Օգանձով, Լիլիթ Վարդանյան



Լուսինե Մարկոսյան, Գայանե Դամբարյան, Պերճ Բարազյան, Հովսեփ Նշանյան

Верность призванию

1 Организованная Союзом композиторов Армении серия авторских концертов композиторов-юбиляров 2019 года дала возможность ретроспективно взглянуть на их творчество. И хотя рамки концерта ограничены, впечатление от прослушанной музыки всегда порождает целостный образ автора. Именно так произошло 6 октября в Доме композиторов Армении на юбилейном вечере Софы Азнаурян, на котором автор представила программу из вокальных сочинений.

Выбор такой программы был не случаен, поскольку основу творческой деятельности Азнаурян, воспитанницы композиторского класса профессора Григория Ильича Егиазаряна в Ереванской государственной консерватории им.Комитаса, составляет жанр вокальной музыки. Автор четырех моно- и камерных опер, некоторые из которых неоднократно исполнялись и за пределами Армении, Азнаурян в этом году удостоилась признания именно в данной области: это премия Международного культурного фонда Ваана Текеяна за монооперу “Армения”. Двуслойный план стихов об Армении Осипа Мандельштама и воспоминаний от совместных путешествий его жены Надежды Мандельштам придают динамичное решение всему музыкальному повествованию (композицию литературного текста осуществила С. Азнаурян).

Вокальный жанр на рецензируемом концерте был представлен достаточно разнообразно. Это детские хоровые и сольные песни, вокальный цикл, посвященный Лусине Закарян (сл.Мкртыча Саркисяна), отрывки из моноопер “Гам-



Детский хор музыкальной школы им.С.Асламазяна, дирижер Асмик Джулфалакян



Наре Меликян

ные, усиливающие то неприязнительность, непосредственность детских чувств, то связь с задорной танцевальной ритмикой, вызывающей ответную реакцию у находящихся в зале детей. На фоне преимущественно лирических по настроению песен выделилась песня “Щенок” (сл.народные), иронический склад которой хорошо передала Наре Меликян, одна из воспитанниц школы.

В программе первого отделения концерта яркое впечат-

щения...

Думается, что этот цикл стал для Софы Азнаурян важной ступенью на пути к оперному жанру. Используемые здесь разнообразные вокальные средства: мелодико-распевные, декламационно-повествовательные, протяжно-скорбные нашли продолжение в операх, начиная с первой – “Надежда” (2004).

Об этом свидетельствовал монолог “Быть или не

быть?” Гамлета в исполнении баритона Гранта Хачикяна, в 2007 году участвовавшего в сценической реализации оперы в рамках международного театрального шекспировского фестиваля в Ереване, известного, как “Арммоно”. Поиск декламационной выразительности современного вокала нашел воплощение в речевых формах оперы “Армения”, вне сомнения наследующей опыт русской оперы XX века. В частности, общим является принцип сквозного развития, обеспечивающего драматическое напряжение, благодаря



Армен Маилян (труба)



Станислав Бахшиян (дап), Саеник Магакян (фортепиано), Асмик Долуханян-Багдасарян (сопрано)



Саеник Магакян (фортепиано), Маргарита Овсепян (сопрано)

лет” (в видеозаписи) и “Армения”, оперы для детей “Приключения Нельзайки” (в армянском оригинале – Чикарели), либретто которой составил сам автор одноименной повести Рубен Марухян, а также моноопера “Надежда” по новелле Зинаиды Гиппиус “Вымысел”. Единственное инструментальное произведение – “Памяти Шарля Азнавура” для трубы и фортепиано (исп. Армен Маилян и Саеник Магакян) по своему мелодическому характеру более ассоциировалось с певческим, чем инструментальным стилем, не нарушая жанровую направленность программы.

В пяти детских песнях (в хоровой “Шутка тучки” на сл. Л. Абрамяна, 1982, выступил Хор детской музыкальной школы им.С.Асламазяна, руководитель Асмик Джулфалакян) нередко использовались музыкальные инструменты – фортепиано, скрипка, несложные колористические удар-

ление оставил вокальный цикл для сопрано и фортепиано, посвященный незабываемой исполнительнице произведений духовной музыки, прежде всего средневековой армянской, и Комитаса Лусине Закарян (он создан в 2003). Цикл неоднократно исполнялся Маргаритой Овсепян и Саеник Магакян. В авторском концерте 2019 года цикл был впервые исполнен солисткой Театра оперы и балета имени А. Спендиаряна Дианой Арутюнян в содружестве с профессором Ереванской консерватории Маргаритой Саркисян. Музыканты продемонстрировали высокий художественный уровень интерпретации. Тембр голоса Арутюнян, эмоциональная проникновенность ее пения – особенно в третьем, предпоследнем романсе цикла, искусно поддерживаемого пианисткой Саркисян, то и дело напоминал адресат посвя-

чему речевые эпизоды свободно переходят в ариозного типа номера. Сближение дистанции между разными вокально-речевыми формами приводит к своего рода синтетическому стилю с доминирующей функцией слова – его смысловых нюансов, значения, звучания.

Это господство слова отлично передано в опере “Надежда” лауреат международных конкурсов, профессор Маргарита Овсепян, долгие годы преподававшая на кафедре академического пения Ереванской консерватории. Ее интерес к развернутым сольным вокальным жанрам, а также к моноопере запомнился по ереванским премьерам, в частности, известной монооперы Франсиса Пуленка “Человеческий голос”. Безусловно, под влиянием мастерства М. Овсепян возможность через вокал передать гамму душевных и экстремально-психологических состояний вдохновила композитора на написание монооперы. Составленное Овсепян либретто на основе новеллы Зинаиды Гиппиус, представительницы поэзии Серебряного века, стало благодатным материалом для воплощения Азнаурян широкого эмоционального спектра, неустойчивости и эфемерности чувствований.

Опера “Надежда” (отметим похвальные отзывы после исполнения в Российской Музыкальной академии имени Гнесиных) стала украшением авторского концерта Азнаурян. М. Овсепян в содружестве с духовно и профессионально близкой ей Саеник Магакян раскрыли достоинства музыки с самой лучшей стороны. Софа Азнаурян предстала автором творческой инициативы, с индивидуальным отношением к назначению композитора в современном меняющемся мире, призванного в художественных традициях прошлого и настоящего находить близкий себе идеал.



Маргарита Саркисян (фортепиано), Артем Асмангулян (дискант)



Диана Арутюнян (сопрано)

СВЕТЛАНА КОРИОНОВНА САРКИСЯН
доктор искусствоведения, профессор ЕГК

Ազգային երաժշտության ուժը-Բանգկոկ

1 2019-ի սեպտեմբերին Թաիլանդի Թագավորությունից ստացած հրավերը կրկին հիշեցրեց, որ ՀՀ անկախության տոնին նվիրված համերգն այս տարի ևս վստահվել է «Երևան» ժողովրդական գործիքների քառյակին: Ազգային երաժշտարվեստը պատվով ներկայացնելու և հարազատ մարդկանց հետ հանդիպելու ցանկությունը կրկին աշխուժությամբ ու հաճելի զգացողությամբ համակեց երաժիշտներին: Խմբի անդամներ, վաստակաշատ երաժիշտներ քամանչահար, կոնցերտմայստեր՝ Հակոբ Խալաթյանի, քամոնահար և լրագրող՝ Անուշ Կիրակոսյանի, դուդուկահար, ՀՀ վաստակավոր արտիստ՝ Արմեն Գրիգորյանի, դիոլահար՝ Վարդան Նազարյանի առաջին այցը չէր Թաիլանդի Թագավորություն: Նրանք արդեն ճաշակել էին հյուպատոսարանի հիշարժան ընդունելությունների բերկրանքը, սակայն ոչ միայն նրանք, այլ այն հայերը, ովքեր որևէ խնդիր են ունենում Թաիլանդ այցելելիս գիտեն, որ օգնող ձեռք ունեն՝ ի դեմս հյուպատոսարանի:

Թաիլանդի Թագավորությունում Հայաստանի պատվավոր հյուպատոս Արտո Արթինյանի և հյուպատոսարանի տեղեկատվության բաժնի պատասխանատու Պարույր Գույումջյանի ջանքերով ամեն տարի մեծ շուքով է նշվում հայրենիքի անկախության օրը: Թե՛ տեղի հայկական համայնքը, թե՛ հյուրերը յուրաքանչյուր տարի համազգային այս տոնին մեծագույն ցանկությամբ են սպասում, որովհետև պատվավոր միջոցառումը Բանգկոկում միշտ վերածվում է բազմազգ ժողովուրդների ներկայացուցիչների միասնական ուրախ տոնախմբության: Որպես կանոն հայկական շնչով ձևավորած «Grand Hayatt Erawan» հսկայական սրահն իսկապես դառնում է Հայաստանի մի մասնիկը: Այստեղ ամեն ինչ շքեղ ու բարձր մակարդակով է



Թաիլանդի Թագավորությունում Հայաստանի Պատվավոր Հյուպատոս Արտո Արթինյան, քամոնահարուհի, «Երևան» քառյակի հիմնադիր և ղեկավար Անուշ Կիրակոսյան, Հյուպատոսարանի հյուրասենյակ-գրադարանում, Ա. Կիրակոսյանը Հյուպատոսին է նվիրում Կոմիտասի «1000 ու մի խաղ» գիրքը

երաժշտության հոգեպարար հնչյունների շնորհիվ, որին անտարբեր չէին կարողանում մնալ այլազգի հյուրերը և: Նրանք մի յուրահատուկ ջանադրությամբ աշխատում էին հայերի հետ շուրջպար բռնել, իսկ հետո պատմում էին, թե աշխարհը գիտի հայկական շուրջպարի ուժը, որը հայերը

վերածելու սկիզբ դրել են իրենք, և որ մյուս դիվանագիտական կորպուսները, ոգևորվելով դրանից, իրենք ևս սկսել են տոնել: Համերգի հաջորդ օրը եղանք հյուպատոսարանում: Հարգարժան պարոն Արթինյանի ուղեկցությամբ շրջեցինք հյուպատոսարանում և նկատեցինք, որ նախորդ այցի ժամանակ սկսած վերանորոգման աշխատանքներն արդեն ավարտվել են: Գեղեցիկ կահավորված հյուրասենյակ-գրադարանը շատ հրապուրիչ էր և հյուրընկալ ոչ միայն տեսքով, այլ նաև բազմաթիվ գրքերով ու նվերներով: Ես հարգարժան հյուպատոսին սիրով ծանոթացրեցի ու նվիրեցի մեծն Կոմիտասի «Հազար ու մի խաղ» ժողովածուն, որ ստացել էի «Մշակութային վերածնունդ» (CULTURAL - AL RENAISSANCE FOUNDATION) հիմնադրամի կողմից: Այնուհետև Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի «Երաժիշտ» ամսաթերթի 122-րդ համարում (2016 թ.), «Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի 90-րդ համարում (2014 թ.) պարբերաբար լույս տեսած տողերիս հեղինակի «Երջանկությունը թևեր է տալիս, հայրենասիրությունն արժանապատվության զգացում» և «Նրան էլ են փորձում յուրացնել» հոդվածները: Ուշագրավ է այն փաստը, որ այս երկու հոդվածներն էլ անգլերեն թարգմանելու և Թաիլանդում տպագրության տալու պայմանավորվածությամբ եղավ:

Հայ համայնքն այստեղ փոքրաթիվ է, բայց կուռ է, կազմակերպված ու պատվախնդիր, լրջորեն է ընկալում իր առաքելությունը, ինչի շնորհիվ մեծ ազդեցություն ունի Թաիլանդի Թագավորությունում: Համայնքում ամենքը գիտեն իրենց հստակ անելիքը և նրանց հետ շփումից հասկանում են, որ ճիշտ կազմակերպված ամեն բան միշտ արդյունք է տալիս ու հավատ ներշնչում: Ահա այս կարծիքն են



«Երևան» քառյակը Թաիլանդի Թագավորությունում Հայաստանի Պատվավոր Հյուպատոս Արտո Արթինյանի և նրա տիկնոջ՝ Սիրին Արթինյանի հետ



Հակոբ Խալաթյան (քամանչահար, կոնցերտմայստեր), Անուշ Կիրակոսյան (քամոնահարուհի), ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Գրիգորյան (դուդուկ), Վարդան Նազարյան (դիոլահար), «Grand Hayatt Erawan» սրահում՝ համերգի ժամանակ

արվում, ինչը հարիր է դիվանագիտական շրջանակներին, սկսած պատվավոր հյուրերի ընդունելությունից մինչև հրաժեշտ տալը: Միջոցառումն սկսվում է պատվավոր հյուպատոս Արտո Արթինյանի ազդեցիկ ելույթով, որը յուրօրինակ հաշվետվություն է, միաժամանակ նոր ծրագրերի մասին իրազեկում: Կազմակերպիչները հայ ազգային երաժշտությամբ են սիրում զարդարել իրենց միջոցառումը՝ դրանով արժևորելով ազգային երգը: Եվ իսկապես, հրաշալի տոնախմբություն ամբողջանում էր հայկական ժողովրդական

ցուցադրել են Թավշյա, ոչ բռնի հեղափոխության օրերին: Սա լավագույն միջոցառումներից է, որտեղ հյուրերը գալիս են խանդավառությամբ, որի ընթացքում անկեղծ շփվում են, գրույցի բռնվում, հարցեր քննարկում, միաժամանակ վայելում հայկական ճիշտ սեղանների բարիքները, որ Հայաստանից էր բերված: Ահա այս կարծիքն են բազմաթիվ երկրների դիվանագետներ, պատվավոր այլ հյուրեր ու նաև հայ համայնքի անդամները, որոնց հետ են համամիտ են: Իսկ Արտո Արթինյանը մեզ տեղեկացրեց, որ ազգային այս տոնի հիշատակության ու իսկական տոնախմբության

կիսում պատվավոր հյուպատոս Արտո Արթինյանը և հյուպատոսարանի պաշտոնյա Պարույր Գույումջյանը, ինչը նրանց թույլ է տալիս վստահ լինելու իրենց ազգանպաստ ու արդյունավետ աշխատանքի մեջ:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Քամոնահարուհի, լրագրող



«Երևան» քառյակը Արտո Արթինյանի և հյուպատոսարանի տեղեկատվության բաժնի պատասխանատու Պարույր Գույումջյանի հետ, հյուպատոսարանի հյուրասենյակ-գրադարանում



«Երևան» քառյակը Արտո Արթինյանի և հյուպատոսարանի աշխատակազմի հետ

Կոմիտաս միզապային գիտաժողով-փառասոն՝ Նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին

1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանը խոստովանեց, որ Կոմիտասի իր ամենասիրելի ստեղծագործությունը «Կռունկ»ն է:

Նա շեշտեց, որ Կոմիտասի ներդրումը մեր մշակույթում հսկայական է և նրա 150-ամյակի շրջանակում իրականացվող բազմաթիվ միջոցառումները վկայում են, որ պետությունը, իշխանությունը և հասարակությունը զնահատում է Կոմիտասի արվեստը:

Արարողությանը ներկա էին նաև ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանը, ազգային բարերար Գաբրիել Չեմբերջյան, մշակույթի գործիչներ և այլ մտավորականներ:

Նրա ծննդյան օրը թանգարան-ինստիտուտում մեկնարկեց Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումների շարքը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կոմիտասի թանգարանում հնչեցրեց թանգարանի զանգը՝ ազդարարելով հորեյանական միջոցառումների մեկնարկը:

Սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 10-ը անցկացվեց Վարդապետի 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով-փառասոնը:

Այն կազմակերպել էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը և Գերմանիայում ՀՀ դեսպանությունը: Փառատոնի գլխավոր հովանավորը «Արդշինբանկն» էր:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանդյանն ասաց, որ թանգարան-ինստիտուտը կազմավորման օրից անցկացնում է այս փառատոնը, որը տարիների ընթացքում դարձել է գիտաժողով-փառասոն:

«Այն ունի իր բարեկամներ աշխարհի տարբեր երկրներում, որոնք միջոցառման շրջանակում հյուրընկալվում են:



Հովհաննես Չեքիջյան, Արայիկ Չարությունյան, Նիկոլայ Կոստանդյան, Միքե Նավոյան Սամյո ասուլիս



Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ, դիրիժոր Հովհաննես Չեքիջյան

պրոֆեսորական դպրոցի հիմնադիրն է, ինչը նշանակում է, որ XX կեսին սկիզբ առած կոմպոզիտորական արվեստն իր եվրոպական ավանդույթներով սկսեց ազգայնացվել և Կոմիտասի ժառանգությամբ վերածվեց ազգային մշակույթի օրգանական ճյուղի: Կոմիտասին հաջողվեց ստեղծել երաժշտական մտածողության մի ձև, որն անչափ տիպական էր հայ ժողովրդին, բայց այդ մտածողությամբ հայ ժողովուրդը չէր ստեղծել իր երաժշտական մշակույթը: Նա մարդ էր, որը մի ամբողջ ժողովրդի համար ստեղծել է մտածողության յուրահատուկ տեսակը:

«Երբ աշխարհին ներկայանում ենք Կոմիտասով, մենք միշտ շահում ենք: Նա թողել է այնպիսի ժառանգություն, որ զարմացրել է եվրոպային: Մենք պարտավոր ենք մեր երախտիքը հայտնել Կոմիտասին, քանի որ նա մեր ազգի պատիվը բարձրացրել է մի նոր աստիճանի», - նշել է Հովհաննես Չեքիջյանը:

Փառատոնի բացումը տեղի ունեցավ Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 26-ին:

Ելույթ ունեցան Հայաստանի ազգային ակադեմիական

լինի Հունբրլոտի համալսարանում մեկնարկեց «Կոմիտասը և իր ժառանգությունը» խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին երաժշտագետներ Հայաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ուկրաինայից, Իտալիայից և Ռուսաստանից: Գիտաժողովի բացման արարողությանը ներկա են եղել և ելույթ ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանը, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանը, Գերմանիայի տնտեսական զարգացման և համագործակցության դաշնային նախարարության պետքարտուղար Մարիա Ֆլախսբարթը, Բեռլինի Հունբրլոտի համալսարանի փոխնախագահ, պրոֆեսոր Լյուդվիգ Քրոնթալերը:

«Կոմիտաս Վարդապետն իր անփոխարինելի տեղն է զբաղեցնում հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Նրա ժառանգության դերը հայ ազգային երաժշտության մեջ անգնահատելի է, իսկ յուրօրինակ և չկրկնվող կոմպոզիտորական ոճը չի ենթարկվում որևէ դասակարգման», - ասել է նախարարը:

Ա. Չարությունյանն արձանագրել է, որ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հորեյանին նվիրված գիտաժողովն ունի կարևորագույն մշակութային ինչպես ոլորտի մասնագետ-



«Հովեր» պետական կամերային երգչախումբ, խմբավար Սոնա Հովհաննիսյան



Հայաստանի պետական կամերային երգչախումբ, խմբավար Ռոբերտ Սլքեյան

Այս տարի գիտաժողով-փառասոնն առանձնակի շեշտվածություն ունի՝ կապված վարդապետի 150-ամյա հորեյանի հետ, որն անցկացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձր հովանու ներքո: Փորձել ենք աշխարհին հավուր պատշաճի ներկայացնել Կոմիտասին և նրա միջոցով մեր բազմադարյա մշակութային ժառանգությունը, մեր երկիրը, մեր ազգային ինքնությունը», - նշել է Ն. Կոստանդյանը:

Գիտաժողով-փառասոնի գեղարվեստական ղեկավար Միքե Նավոյանի խոսքերով. «Այս հորեյանը միայն ազգային իրողություն չէ, այլ միջազգային երևույթ և այն կարևոր հարթակներից մեկն է, որտեղ հայ ժողովուրդը ներդաշնակ ու համաբայլ է աշխարհին: Կոմիտասը հայ ազգային կոմ-

երգչախումբը, Կարինե Բաբաջանյանը (սոպրանո, Գերմանիա), «Գեղարդ» երգեցիկ խումբը, Շտեֆան Ֆինկեն (տենոր, Գերմանիա), Երևանի պետական կամերային երգչախումբը, Լուկա Բրունոն (բարիտոն, Իտալիա), «Հովեր» պետական կամերային երգչախումբը, Տակահիրո Ակիրան (դաշնամուր, Ճապոնիա) և Հայաստանի պետական կամերային երգչախումբը:

Կոմիտասի 150 ամյակին նվիրված փառատոնի մի քանի համերգներ տեղի ունեցնան նաև Արցախում՝ Ստեփանակերտում, Շուշիում և Գանձասարում:

Այս տարի փառատոնի շրջանակներում իրականացվեցին միջոցառումներ Գերմանիայում. Հոկտեմբերի 8-ին Բեռ-

լինի, այնպես էլ հանրության համար: «Կատախ են, որ այն կծառայի իր նպատակին և այս օրերի ընթացքում կլինի լավագույն փորձի փոխանակում, միջմշակութային երկխոսության խորացում և համագործակցային սերտ կապերի հաստատում», - նշել է նախարարը: Նա նաև շնորհակալություն է հայտնել գիտաժողովի կազմակերպիչներին՝ Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը, Բեռլինի Հունբրլոտի ամվան համալսարանին, Կոմիտասի թանգարան-ինստիտուտին, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությանը, Բեռլինի պետական գրադարանին և Հալլեի Մարտին Լյութերի ամվ. համալսարանին:

7



Երևանի պետական կամերային երգչախումբ, խմբավար Հարություն Թովհիկյան



ՀՀԿԳՄՆ Արայիկ Չարությունյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց Հայրապետ, ՀՀ մշակույթի գծով փոխնախարար Արա Խզմայան, փոխվարչապետ Տիգրան Ավինյան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանդյան, «Գեղարդ» երգեցիկ խումբ, խմբավար Անահիտ Պապայան

Կոմիտաս միզագային գիտաժողով-փառասոն՝ Նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին

6 Միզագային համաժողովի մասնակիցներն այցելել են նաև այն ֆակուլտետ, որտեղ սովորել է Կոմիտասը, ծաղկեպսակ են դրել նրա հուշատախտակին՝ հարգանքի տուրք մատուցելով Վարդապետի հիշատակին:



Սվետլանա Նավասարդյան, «Կոմիտաս» գիտաժողով-փառասոնի հանդիսավի բացման արարողություն-համերգ



Էօրնեկեանի անվ. հանրակրթական դպրոցի երգչախումբ

Հոկտեմբերի 9-10-ը, գիտաժողովը շարունակվեց Հալլե - Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանում: «Կոմիտաս» միզագային գիտաժողով-փառասոնի հիմնական նպատակներից մեկը Վարդապետի ժառանգության միջոցով հայ երաժշտական մշակույթի հանրահռչակումն է եվրոպական մշակույթում և XIX դարավերջի ու XX դարակազմի եվրոպական մշակույթի տարածումը հայկական միջավայրում: Այն հիմնվել է 2014 թվականին ՀՀ մշակույթի

նախարարության հովանավորությամբ: Նախորդ 4 տարիներին գիտաժողով-փառասոնն անցկացվել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի կողմից՝ ներգրավելով միզագային հեղինակություն ունեցող երաժիշտների և գիտնականների:

Լյութը վերցված է <https://armenpress.am/arm/news/> կայքից՝ Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՅԱԼԸ



Գիտաժողով Գերմանիայի Հալլե - Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանում



Միզագային համաժողովի մասնակիցներն այցելել են այնտեղ, որտեղ սովորել է Կոմիտասը, ծաղկեպսակ են դրել նրա հուշատախտակին՝ հարգանքի տուրք մատուցելով Վարդապետի հիշատակին Գերմանիա, 8.10.2019 թ.

ՄԻՎՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏՆԵՐ ՄԵՎ ՄՁՆՈՒՈՐՏՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ծայնադարանում արվեստագիտության դոկտոր, երաժշտատեսական ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Կորյունի Սարգսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Երիտասարդական ամբիոն» շաբաթի 2-րդ միստր (առաջինը տեղի էր ունեցել ապրիլի 8-ին, որը կրում էր «Երաժշտություն և ֆիլմ» խորագիրը): Այն նվիրված էր ստեղծագործական բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Ջեմմա Մինասյանի երկերի ունկնդրմանը և քննարկմանը: Ներկայացված էին մենամվազ՝ ֆլեյտայի համար, «The Bluebird's song» և գործիքային անսամբլի համար գրված «Athmospheres» ստեղծագործությունները:

Ս. Կ. Սարգսյանի ներածական խոսքից հետո Ջեմման պատմեց «Композиторские читки» և Պ. Չայկովսկու անվ. «Երիտասարդ կոմպոզիտորների 9-րդ Միզագային ակադեմիա»-ին մասնակցելու մասին:

«Композиторские читки»-ին Ռուսաստանի կոմպոզիտորների միության և Մոսկվայի ժամանակակից երաժշտու-

գուրովի (Մոսկվա), Վլադիմիր Լադոմիրովի (Սանկտ-Պետերբուրգ) և Լիլիա Իսխակովայի (Կազան) ստեղծագործությունների հետ մեկտեղ զետեղվեց լավագույն երկերի շարքում, և հնարավորություն ընձեռվեց առանց մրցույթի ներկայանալ նշված նախագծին», - պատմեց Ջեմման:

Չայկովսկին՝ Ռուսաստանի Պերմ նահանգում գտնվող քաղաք է, որտեղ և իրականացվում է նախագիծը: Այն Ռուսաստանի ամենամեծ կոմպոզիտորական միզագային սեմինարն է, ստեղծագործական լաբորատորիան՝ երիտասարդ կոմպոզիտորների և կատարողների համար: Դասընթացների ընթացքում, ընտրված կոմպոզիտորները անվանի ստեղծագործողների ղեկավարությամբ գրում են նոր երկեր, որոնք կատարվում են մի շարք եզրափակիչ համերգներում՝ Չայկովսկի, Մոսկվա քաղաքներում, Ռուսաստանի մարզերում և արտերկրում Ռուսաստանի առաջատար անսամբլի կողմից: Ակադեմիայի գեղարվեստական ղեկավար Դմիտրի Կուլիանովսկիի նախաձեռնությամբ ծրագրի գոյության տարիների ընթացքում տեղի են ունեցել ժամանակակից

մանիա), Բրին Հարիսոնը (Մեծ Բրիտանիա), Դեյվիդ Վենը (Չինաստան/Շվեյցարիա): Ջեմման նշում է, որ ակադեմիայի դասընթացներում ներկայացրել է իր «Athmospheres» երկը, որի մասին հեղինակը նշում է. «Այնտեղ ներկա դասախոսների կողմից իմ ստեղծագործությունը արժանացավ բարձր գնահատականի և զովեստի խոսքերի: Մեծ պատիվ էր ինձ համար աշխատել հատկապես պրոֆեսորներ Մարտին Շուտլերի, Բերնարդ Կավանայի և Դեյվիդ Վենի հետ, լսել նրանց խորհուրդները»:

Նրա խոսքից հետո ներկա ուսանողները (երաժշտագիտական, ստեղծագործական և դաշնամուրային բաժիններին) հնարավորություն ունեցան կենդանի կատարմանը լսել «The Bluebird's song» երկը՝ Հայաստանի Ազգային Ֆիլարմոնիկ նվագախմբի մենակատար Նարեկ Ավագյանի կատարմամբ և «Athmospheres» ստեղծագործության ծայնագրությունը: Ն. Ավագյանը իր կատարումից հետո մասնակցեց քննարկմանը և բացատրեց ստեղծագործությունում առկա ժամանակակից տեխնիկական հնարքները:



Նարեկ Ավագյան, Ջեմմա Մինասյան



Սևան Դարիբյան, Ջեմմա Մինասյան



Սվետլանա Կորյունի Սարգսյան, Սևան Դարիբյան, Եվգենյա Նաղդալյան, Գոհար Մակարյան, Արտյոմ Անդրեասյան

թյան անսամբլի կողմից իրականացվող մեկ շաբաթյա նախագիծ է, որի ընթացքում համակարգող կոմպոզիտորները և նշված անսամբլը աշխատում են ստեղծագործողների հետ: Տեղի են ունենում քննարկումներ և լսումներ, որոնց արդյունքում լավագույնները հրավիրվում են Չայկովսկու՝ «Երիտասարդ կոմպոզիտորների միզագային ակադեմիա»-ի երկշաբաթյա դասընթացներին մասնակցելու:

«Իմ «Athmospheres» ստեղծագործությունը Դմիտրի Սա-

երաժշտության դասախոսություններ, ավելի քան 100 համերգներ, երիտասարդ հեղինակների երաժշտության շնորհանդեսներ, որոնց արդյունքում նրանց ստեղծագործությունները հրատարակվել են «Donemus» (Հոլանդիա) երաժշտական հրատարակչությունում:

Այս անգամ դասախոսների շարքում էին Դմիտրի Կուլիանովսկին (Ռուսաստան), Բեռնար Կավանան (Ֆրանսիա) («2e2m» անսամբլի նախագահ), Մարտին Շուտլերը (Գեր-

մ. Կ. Սարգսյանի օժանդակությամբ սեմինարի ընթացքում տեղի ունեցավ մտքերի փոխանակում լավագույն երկերի մասին: Ստեղծվեց մի մթնոլորտ, որը միավորեց մասնակիցներին մի ընդհանուր գաղափարի շուրջ:

ԱՆԻ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի
1-ին կուրսի ուսանողուհի

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան

Պատանի կոմպոզիտորները մեծ դասականի անը



Երաժշտության ստեղծումն, առհասարակ, ֆենոմեն է՝ թե ինչպես է անկողնուց ծնվում հնչյունների աշխարհը, ծնվում և կյանք ստանում կոմպոզիտորների շնորհիվ:

Առավել հետաքրքրական է դիտարկել, թե ինչպես են պատանիներն ապրում ստեղծագործելու պահը, ինչ մտքեր ու զգացողություններ են նրանց պատում այդ ժամանակ, ինչ նրբերանգներ ունի նրանց ներաշխարհը... 30 կոմպոզիտորների 5-ին, հայ մեծ դասականի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի հարկի տակ հյուրընկալվեցին 6 շնորհաշատ պատանիներ՝ Էդվարդ Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթի մրցանակակիրները: Օրը խորհրդանշական էր, քանի որ այն համընկավ ուսուցչի միջազգային տոնի և հայ մեծանուն կոմպոզիտորի հիշատակի օրվան. կոմպոզիտոր, որի անունով է կոչվել մրցույթը:

ՀԿՄ հետ համատեղ կազմակերպված՝ պատանի կոմպոզիտորների հետ երաժշտական ինտերակտիվ հանդիպմանը ներկա էին տարբեր սերնդի և ուղղվածության երաժիշտներ՝ կոմպոզիտորներ, երաժշտագետներ, կատարողներ և երաժշտասերներ: Մասնակիցներն անհատապես ներկայացվեցին մասնագիտական և մարդկային հետաքրքրություններով հանդերձ:

Երաժշտական օրինակներին հաջորդեց անմիջական երկխոսությունը ներկաների հետ՝ անսպասելի բացահայտումների առիթ դառնալով շատերի համար: Պատանի ստեղծագործողների մասին խոսք ասելու հնարավորություն ունեցան նրանց ծնողները և կոմպոզիցիայի ուսուցիչները, ինչն ընդհանուր համայնապատկերը դարձրեց ավելի ամբողջական: Եվ այսպես, ահա նրանք:

Ռուբեն Ավագյան, ավագ խումբ, 3-րդ մրցանակ, դասատու՝ Արփիմե Կալինինա: Պատանի կոմպոզիտորն արդեն ունի երաժշտություն ստեղծելու սեփական մեթոդները: Սկզբում, երբ նոր էր ընդունվել Տ. Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոց, մշակում էր գամմաներ՝ 2-3 նոտաներից բաղկացած: Այդ նախափորձությունն ավելի ու ավելի զարգացավ: Ռուբենը սիրում է իմպրովիզներ անել, նա կարող է առավելուց զարթնել, մտքում երաժշտություն ունենալ, նվագել և ձայնագրել: Այժմ արդեն ունի 235 ձայնագրություն: Տևողությունները՝ 3-ից սկսած, ամենաերկարը տևում է 35 րոպե: Ռուբենը շատ է սիրում Բարոկկոյի և Ռոմանտիզմի դարաշրջանների կոմպոզիտորներին, հատկապես՝ Յ. Ս. Բախին, Շոպենին, Գրիգին, Սեն-Սանսին:

Բայց հետաքրքրությունները չեն սահմանափակվում երաժշտությամբ: Նա շատ է սիրում ֆիզիկա, այն ամենն, ինչը կապված է ալիքների և հնչյունների հետ: Ձայնագրում է հնչյուններն ինտերվալների տեսքով և դրանք մշակում թվային տեխնիկաների միջոցով:

Թե քանի մասնագիտություն կունենա բազմակողմանի պատանին, ցույց կտա ապագան: Երաժշտության ասպարեզում նրան գրավում է կոմպոզիտորի մասնագիտությունը, իսկ որպես կատարող՝ ոչ թե դաշնամուրը, այլ՝ երգեհոնը: Ի դեպ, նրա երազանքներից մեկն է այցելել Վիեննայի երաժշտական գործիքների թանգարան և տեսնել այնտեղ պահվող ջազային երգեհոնը: Մրցանակի արժանացած գործն ի սկզբանե նախատեսել էր որպես փոքր ռոք կոմպոզիցիա: Շատ տարբերակներ է ստեղծել, ընտրված տարբերակը 32-րդն է:

Իր Պիեսը դաշնամուրի համար Ռուբենը կատարեց անձամբ, իսկ պատանու բազմակողմանի հետաքրքրություններն ու օժտվածությունն անտարբեր չթողեցին ներկաներին:

Երիկա Մարկոսյան, ավագ խումբ, 2-րդ մրցանակ, դասատու՝ Արմենուհի Կարապետյան:

Կոմպոզիտորական արվեստը նրա սրտի և մտքի դմբերը թակում է արդեն 4-րդ տարին: Երիկայի առաջին հորինվածքը չինական մոտիվ էր, որը նվագում էր դաշնամուրի սև ստեղծների վրա: Դա մայրիկի հետ ներկայացրեցին Ղ. Սարյանի անվ. արվեստի դպրոցի փոխտնօրենին, վերջինս էլ ողջունեց ստեղծագործելու միտքը, իսկ չինական մեղեդին այդպես էլ գրի չառավ:

Երիկայի սիրելի կոմպոզիտորներից է Շոպենը, ժամանակակիցներից՝ Արամ Սաթյանը:

Ազատ ժամանակ սիրում է երգեր լսել, զբոսնել և գրքեր կարդալ, շատ է սիրում նկարել, հատկապես ազգային թեմաներով պատկերներ, լույսի և ստվերի համադրությամբ գծապատկերներ: Հանրակրթական դպրոցի առարկաներից էլ նախընտրում է մաթեմատիկան, ֆիզիկա-տուրան և ռուսերենը:

Ինչպես է պատկերացնում ապագայի ուղին. այդ հարցի շուրջ գրուցել ենք բոլոր մասնակիցների հետ: Երիկան նախատեսում է սովորել կոմպոզիտորի կոմպոզիցիայի բաժնում, բայց զուգահեռաբար կատարել այլ աշխատանք, որովհետև միայն մեկ գործով զբաղվելը քիչ է:

Փոքր չեն նրա հաջողությունները դաշնամուրային բաժնում, պարբերաբար մասնակցում է փառատոների և մր-



Պատանի կոմպոզիտորները Սարինե Օթարյանի հետ



Միջոցառման մասնակիցները և հյուրերը

ցույթների: Սիրում է նվագել Շոպենի, Շուբերտի դաշնամուրային երկերը, Սայաթ-Նովայի գործերը՝ Գեորգի Սարաջյանի փոխադրմամբ: Դաշնամուր պարապելիս երբեմն շեղվում է և սկսում հորինել:

Երիկա Մարկոսյանն իր «Լեռնցիների պարը» դաշնամուրի համար կատարեց անձամբ:

Էդգար Մխիթարյան, կրտսեր խումբ, 3-րդ մրցանակ, դասատու՝ Մարիա Ղուշյան: Էդգարի երաժշտական կրթությանը Ս. Ասլանազյանի անվ. թիվ 1 դպրոցն է: Գործիքը դաշնամուրն է, նույնիսկ կարելի է ասել, որ բավականին ծանրաբեռնված է դաշնամուրի դասարանում: Նա հաճախ է մասնակցում մրցույթների և բարձր տեղեր է զբաղեցրել՝ «Արտ



Կոմպոզիտոր Էդգար Մխիթարյանը իր կարծիքը հայտնեց պատանի կոմպոզիտորների ստեղծագործությունների վերաբերյալ

Մյուզիք», «Վերածնունդ», «Նոր ամուններ»: Որպես դաշնակահար սիրում է կատարել Բաբաջանյանի, Շչեդրինի, Շոտակովիչի գործերից, ինչպես նաև ժամանակակից կոմպոզիցիաներ:

Էդգարը հանրակրթական դպրոցի առարկաներից սիրում է ռուսերենը, մաթեմատիկան, կերպարվեստը: Նա նաև ունի յուրօրյան ալիք, որտեղ տեղադրում է իր ֆոտոխցիկով կամ պլանշետով նկարահանած տեսառոլվակները: Ֆիլմեր դիտելով՝ ինքն էլ ոգեշնչվում է և կյանքի կոչում իր մտախոհացունները: Իսկ ապագա՞ն, ապագան պատկերացնում է որպես դաշնակահար, կոմպոզիտոր և բլոգեր:

Իր՝ մրցանակի արժանացած «Տազնապալի երազ»ը դաշնամուրի համար Էդգարը կատարեց անձամբ՝ աչքի ընկնելով նաև դաշնամուրային տեխնիկական հմտություններով:

Էդուարդ Ալեքսանյան, կրտսեր խումբ, 2-րդ մրցանակ, դասատու՝ ՀՀ ժողովրդական արտիստ Գեղունի Չթյան: Էդուարդը 6 տարեկանից հաճախել է դաշնամուրի, 3 տարի առաջ էլ սկսել է հաճախել շեփորի և կոմպոզիցիայի դասարաններ: Այժմ դաշնամուրային բաժինն արդեն ավարտել է, մյուս բաժիններում 4-րդ դասարանում է: Երաժշտական ուրախալի հրաբխի խառնարանը Կ. Սարաջյանի անվ. դպրոցն է:

Էդուարդն ստեղծագործում է 9 տարեկանից: Սիրելի կոմպոզիտորներից են Բախը, Չայկովսկին, Խաչատրյանը, նաև սիրում է ջազ: Գեղունի Հովհաննեսին իր մեջ սերմանել է սեր դեպի հայկական ժողովրդական երաժշտությունը, և Էդուարդի գործերում նկատելի է ազգային երանգը:

Շեփորի երկացանկը հիմնականում ջազային է, դաշնամուրինը՝ դասական, անդրադառնում է Բախի, Լիստի, Չայկովսկու, Ռախմանինովի գործերին: Հանրակրթական դպրոցի առարկաներից առանձնացնում է մաթեմատիկան, ֆիզիկան, հայոց լեզուն և գրականությունը, ինչպես նաև անգլերենը: Սովորում է գերազանց: Երաժշտությունից բացի կուզենա նաև այլ մասնագիտություն ունենալ, թերևս՝ մաթեմատիկական ուղղվածությամբ:

Իր Ռոմբոն դաշնամուրի համար պատանի հեղինակը կատարեց անձամբ, որից հետո նրա հայրիկը՝ Նարեկ Ալեքսանյանը խոստովանեց, ինքը մանկուց երազել է գրել երաժշտություն, բայց չի ստացվել: Այժմ որդին իրագործում է իր երազանքը:

Մերի Առակյան, կրտսեր խումբ, 1-ին մրցանակ և «Հանդիսատեսի համակրանք» մրցանակ, դասատու՝ Նարինե Մխիթարյան: Մերիի ծնողավայրը Ռուսաստանն է, թեև ընտանիքն արմատներով Արթիկից է և հենց այնտեղ էլ բնակվում է: Աղջնակի ուսումնառությունը Դ. Դազարյանի անվ.

երաժշտական դպրոցում սկսվեց 5 տարեկանից: Տատիկը Մերիին մանկապարտեզից քնի ժամին բերում էր երաժշտական դպրոց, հետո նորից տանում մանկապարտեզ: Սկզբում դաշնամուրի դասարանն էր, 5-րդ տարում զուգահեռաբար՝ նաև ջութակինը, իսկ կոմպոզիցիան սկսեց որպես անհատական դասընթաց դաշնամուրի դասատուի մոտ, քանի որ դպրոցում կոմպոզիցիայի դասարան չկա:

Մերին սիրում է երկու գործիքն էլ, իսկ ջութակ սկսել է նվագել, քանի որ ստեղծագործություն էր գրել ջութակի համար և ցանկանում էր տիրապետել նաև այս գործիքին: Հոգնում է՝ իհարկե, բայց հաճելի է: Մերին նպատակ ունի գերազանց սովորել հանրակրթական դպրոցում, որպեսզի կարողանա նաև այլ մասնագիտություն ընտրել: Շատ է սիրում ասունքել և նկարել: Սիրելի առարկաներն են՝ մայրենին, մաթեմատիկան, ինչպես նաև անգլերենը: Մայրիկը՝ Լիլիթ Առակյանը, պատմեց, որ իրենց համար զարմանալի էին Մերիի երաժշտական հաջողությունները: Թող ընտրի իր ցանկացած ուղղությունը, բայց ինքը պահանջելու է, որ նա լինի լավ մասնագետ:

Մերիի «Ստվեր» խորագրով կոմպոզիցիան ջութակի համար կատարեց Գեորգի Գասպարյանը՝ զարմացնելով ստեղծագործության խորունկ, հայեցողական, անգամ դրամատիկական կերպարով և ժամանակակից երաժշտական լուծումներով:

Միջոցառման վերջին մասնակիցը՝ Սյուզաննա Աղամալյանը մրցույթի կրտսեր խմբում 1-ին մրցանակը կիսել է Մերի Առակյանի հետ, դասատու՝ Նաիրա Դիվանյան: Սյուզանի երաժշտական ծեռքերումն էր ուղին սկսվել և շարունակվում է Հ. Դանիելյանի անվ. արվեստի դպրոցում, դաշնամուրային բաժնի արդեն 7-րդ և կոմպոզիցիայի 4-րդ դասարաններում: Իսկ միջոցառման մրցույթին մասնակցել է արդեն 4 անգամ և բոլոր դեպքերում էլ երբեք չի հուսահատվել և շարունակել է աշխատել:

Սյուզանի սիրելի կոմպոզիտորներն են Շոպենը, Ռախմանինովը, Խաչատրյանը: Որպես դաշնակահար սիրում է նվագել Ռավելի, Սլոնինսկու, Ռախմանինովի ստեղծագործություններից: Կոմպոզիցիայի դասերին չեն սահմանափակվում իր անգամ ամենախելախել պոթեկությունները:

Այս տարի Միրզոյանի անվ. մրցույթին ներկայացրել էր .ես ու ես երաժշտամուրային ստեղծագործությունը. հանձնախմբի անդամները միաբերան նշել էին, որ իր և Մերի Առակյանի գործերը XXI դ. կոմպոզիցիաներ էին և ողջունել այդ փաստը: «Ես ու ես»ը գրվել է 1 շաբաթում և իր ես-ի հետ ներքին պայքարի մասին է:

Հայ մեծ դասականի տուն-թանգարանի դահլիճում ռոյալի բացակայության պատճառով դաշնամուրով հնարավոր չեղավ ներկայացնել այս ստեղծագործությունը, և ներկաները Սյուզաննա Աղամալյանի «Ես ու ես»ն ունկնդրեցին հեղինակի կատարմամբ, բայց համերգային տեսագրությամբ:

Միջոցառման ավարտին դահլիճի ջերմ մթնոլորտը հասել էր զգալիորեն: Միրզոյանյանի մրցույթի գեղարվեստական ղեկավար, երիտասարդ կոմպոզիտոր և երաժշտական գործիչ Էդմոնդ Մակարյանը նշեց, որ նմանատիպ հանդիպումներն անչափ կարևոր են պատանի ստեղծագործողների համար, իմաստավորում և մոտիվացնում են նրանց՝ ստեղծագործելու փաստը: Ծավալուն եզրափակիչ խոսք ունեցավ տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը: Նա հերթով անդրադարձավ բոլոր մասնակիցներին, ուրախություն հայտնեց նրանց բազմակողմանի և բազմաշնորհ լինելու առթիվ, նաև շեշտեց, որ անկախ նրանից՝ իրենք կդառնան կոմպոզիտոր, թե ոչ, կյանքին կմոտենան ստեղծագործաբար: Թերևս, հենց դա է ամենակարևոր ծեռքերումը պատանեկան շրջանում կոմպոզիցիայով զբաղվելու պարագայում:

Ներկաները միմյանց հրաժեշտ տվեցին՝ երաժշտական ճոր հանդիպումների մտախոհացուններով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՍԲԱՐՅԱՆ
Երաժշտագետ,
Ա.Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող
Հոդվածը տպագրվել է www.Mitk.am կայքում

Ո՞Վ Է ԵՂԵԼ ՏԵՐՅԱՆԻ ՍՐՏԻ ԹՎԱԳՈՒՀԻՆ

Վահան Տերյան (Վահան Սուքիասի Տեր-Գրիգորյան), (ծնվ. հունվարի 28 (փետրվարի 9), 1885 թ., Գանձա, Թիֆլիսի նահանգ, Ռուսական կայսրություն - հունվարի 7, 1920 թ., Օրենբուրգ, Խորհրդային Ռուսաստան), նշանավոր հայ բանաստեղծ, քնարերգու և հասարակական-քաղաքական գործիչ:

Չարդազրույց՝ Վահան Տերյանի դստեր՝ Նվարդ Տերյանի հետ՝

Կինը՝ Տերյանի պատկերացմամբ եղել է «քաղցր այն մարդը, ով կարող է հասկանալ քեզ, ում կրծքին կարող ես լավ կյանքիդ չիրականացած երազներդ, մոլորություններդ ու հույսերդ ողջ դառնությունը»: Բազմաթիվ կանանց հետ է բարեկամություն արել, նրանցից յուրաքանչյուրին սիրել յուրովի: Տերյանի բազմաշերտ ու բազմերանգ հոգին որոնել է իր «ցնորքների աղջկան», ծանոթացել է մեկի հետ, նրա մեջ գտել մի լավ բան, բայց... պակասը լրացնելու համար նոր ծանոթություն է որոնել ու այս անգամ մեկ ուրիշ լավ բան է հայտնաբերել իր համար: Իդեալական կնոջ որոնումների ճանապարհին Տերյանը ծանոթացել է բազմաթիվ կանանց հետ ու յուրաքանչյուրի մեջ եղած լավը գունդարկելով՝ պոետին տվել է մի ամբողջական կնոջ պոետական կերպար: Իհարկե, հանդիպումները, ծանոթությունները ոգևորել են, իսկ բաժանումները՝ տխրեցրել Տերյանին: Այդպիսի պահերին են ծնվել «Կարուսել», «Տիրություն», «Էստոնական երգ» բանաստեղծությունները: Ի դեպ, այս վերջինի մասին, ընթերցողը տարակուսում է՝ ինչո՞ւ էստոնական, ինչո՞ւ է այն էստոնական կոչվել: Տերյանը Մոսկվայում ծանոթանում է գեղանի էստոնուհու՝ Ալինա Իվանովնա Մոզուրի հետ, որը վարձով ապրում էր հարևանությամբ: Աղջիկը հրաշալի ծայն է ունեցել և հաճախ է երգել էստոնական երգեր Տերյանի համար: Երբ խանութում աշխատող Ալինան Մոսկվայից մեկնում է, մեծ վիշտ է պատճառում բանաստեղծին: Ու ծնվում է Տերյանի ամենագեղեցիկ, ամենաքնարական բանաստեղծություններից մեկը՝ «Էստոնական երգը»: «Դարձիր ինձ մոտ, վերադարձիր դու նորից...»:



Վահան Տերյանի անձնական ֆոտոգրաֆիա: Քաղաքացիական պատերազմի խառնիխուռն ժամանակահատվածը ճակատագրական դարձավ Տերյանների համար. ոչ մի հաղորդակցության միջոց չի եղել, նրանց կապը, ցավոք, խզվել էր ընդմիջտ: Երկու տարի բանաստեղծը ամեն ջանք գործադրում է Մոսկվայից գոնե մի լուր ստանալ, բայց ապարդյուն:

Մոսկվայից հետ տարանջատման տարիներին նա մտերմանում է դարձյալ գեղեցկուհի Անահիտ Շահինջանյանի հետ: Վահան Տերյանի ապրած վերջին 1,5 տարվա նեցուկ-հույս էր Շահինջանյանը, ով իր կյանքը ոչ ամուրի Տերյանի հետ կապելու համար դատապարտված և գրեթե մերժված էր իր ծնողների կողմից. Անահիտը հղիանում է Տերյանից: Անահիտը ևս աշխատել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատում: Կառավարության կարևոր ու շտապ հանձնարարությամբ Տերյանը Անահիտի հետ 1919 թ. մեկնում է Միջին Ասիա: Ճանապարհին Տերյանի դրությունը ծանրանում է: Նրանք իջևանում են Օրենբուրգում: Այս ճգնաժամային վիճակում մահվան դեմ մաքառող բանաստեղծը կնոջից պահանջում է դաշնամուր նվագել ու այնքան նրբանկատ, հարցնում է.

«Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ համար է ավելի դժվար նրա՞, որ մեռնում է, թե՞ հարազատների, որ մնում են»:

Հուսահատ, վիրավոր Անահիտը, իր և պոետի ճակատագրական ողջ անողորությունը ստանձնելով, կարողանում է դիմանալ և համբերումով տանել ճակատագրից բաժին հասած հարվածները... 19-ամյա Անահիտը Տերյանի կյանքում նա էր, ով կատարում էր բանաստեղծի վերջին «կտակը». «հանգիստ նստել իր մոտ և լաց չլինել ու չվազվզել»: Անահիտը Տերյանի տոհմաձառն պարզեց Նվարդին՝ Գրիգոր և Վահան Տերյան-Եմինների մորը: Նվարդ Տերյանը գրական ժառանգությունը պահպանելու խնդրում մեծարժեք գործեր է կատարել՝ հրատարակել հուշեր, հոդվածներ, գրքեր ռուսերենով:

կական եկեղեցում: Նրանք ամուսնացել են 1911 թ. փետրվարին: Մոսկվայի (Շուշանիկ) (1887–1936թթ.) ծնողները Նոր Նախիջևանցի են եղել, ապրել են Ստավրապոլում: Գիմնազիան ավարտելուց հետո նա ընդունվել է Մոսկվայի Գետիեի կանանց բարձրագույն կուրսերը: Տերյանի կյանքում Մոսկվայում եղել է «սուրբ սեր», «անձիր բարություն», «մոր պես անոխ ու ներող, վեճեր փարատող...»: Այս բնութագրումները բանաստեղծն է արել, նրա համար Մոսկվայում «մանկիկ էր, Սեր էր և Լյուլիկակ»: Տերյանի ընկերները մեծապես հարգանքով լցված Մոսկվայից բնութագրել են այսպես.

«Անչափ հյուրասեր էր, շրջապատում հարգված էր, սիրված ու մեղմ էր բնավորությամբ, արվեստի և գրականության հանդեպ մեծ հետաքրքրություններ է ունեցել, ընկերասեր է եղել»:

Անչափ հմայիչ Մոսկվայում եղել է բանաստեղծի կյանքի ու պոետիկայի ամենավերջու երազն ու երգը «Տանջվող ու որբ Աղամորդին»: Պոետը մի շարք բանաստեղծություններ է նվիրել կնոջը, նրա հետ մեկնել հայրենի Ջավախք, ամառը հանգստացել են Գանձայում: Մոսկվայում տասական թվերին հիվանդացել է թրթախտով, նրանց առաջնելը, ծնվելուց շատ չանցած՝ մահանում է: Հետո, իրենց երկրորդ երեխայի հետ, որը հրվանդ ու թույլ է եղել (ծնվ. 1918 թ.), Մոսկվայում մեկնում է Ստավրապոլ: Քաղաքացիական պատերազմի խառնիխուռն ժամանակահատվածը ճակատագրական դարձավ Տերյանների համար. ոչ մի հաղորդակցության միջոց չի եղել, նրանց կապը, ցավոք, խզվել էր ընդմիջտ: Երկու տարի բանաստեղծը ամեն ջանք գործադրում է Մոսկվայից գոնե մի լուր ստանալ, բայց ապարդյուն:

Մոսկվայից հետ տարանջատման տարիներին նա մտերմանում է դարձյալ գեղեցկուհի Անահիտ Շահինջանյանի հետ: Վահան Տերյանի ապրած վերջին 1,5 տարվա նեցուկ-հույս էր Շահինջանյանը, ով իր կյանքը ոչ ամուրի Տերյանի հետ կապելու համար դատապարտված և գրեթե մերժված էր իր ծնողների կողմից. Անահիտը հղիանում է Տերյանից: Անահիտը ևս աշխատել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատում: Կառավարության կարևոր ու շտապ հանձնարարությամբ Տերյանը Անահիտի հետ 1919 թ. մեկնում է Միջին Ասիա: Ճանապարհին Տերյանի դրությունը ծանրանում է: Նրանք իջևանում են Օրենբուրգում: Այս ճգնաժամային վիճակում մահվան դեմ մաքառող բանաստեղծը կնոջից պահանջում է դաշնամուր նվագել ու այնքան նրբանկատ, հարցնում է.

«Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ համար է ավելի դժվար նրա՞, որ մեռնում է, թե՞ հարազատների, որ մնում են»:

Հուսահատ, վիրավոր Անահիտը, իր և պոետի ճակատագրական ողջ անողորությունը ստանձնելով, կարողանում է դիմանալ և համբերումով տանել ճակատագրից բաժին հասած հարվածները... 19-ամյա Անահիտը Տերյանի կյանքում նա էր, ով կատարում էր բանաստեղծի վերջին «կտակը». «հանգիստ նստել իր մոտ և լաց չլինել ու չվազվզել»: Անահիտը Տերյանի տոհմաձառն պարզեց Նվարդին՝ Գրիգոր և Վահան Տերյան-Եմինների մորը: Նվարդ Տերյանը գրական ժառանգությունը պահպանելու խնդրում մեծարժեք գործեր է կատարել՝ հրատարակել հուշեր, հոդվածներ, գրքեր ռուսերենով:

ԼՈՒՍԻՆԵ ԹՓՓՈՒՋԱՆ «Մեծաց շարունակվող գրուցաշար. Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր, Կա քո հոգու մեջ անբախտակց մի մութ, Քո մութ հայացքում կա մի թևուկ սուր՝ Քեզ միշտ բաքցնող մի նուրբ վարագույր... Փակ են քո սրբի հեռուններն իմ դեմ, Հավերք քեզ կապված՝ քեզ օտար եմ ես. Երբ խենթ խնդրությամբ փայտալույս եմ քեզ՝ Եվ սիրում եմ քեզ, և՛ քեզ չըզգիս: Փակ են քո սրբի հեռուններն իմ դեմ, Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր. Քո հոգու վրդա կա մի վարագույր. Ո՞վ ես դու, ո՞վ ես. բնավ չըզգիս եմ...

ՎԱԴԱՆ ՏԵՐՅԱՆ

Ուրիշ տակից լորը թռավ Իմ մանկության Արալի լեռ թռավ Հետ մայրեցի արդեն ուշ էր Կյանքի քաղցր օրը թռավ:

Աշխարհ մտա ես կարոտ Աղբյուրների պես կարոտ Ու կգնամ աշխարհից Միրտա հավետ ձեզ կարոտ:

Լավ Ծնողի լավ որդի Նման է ալ վարդի Ողջ աշխարհն է կարոտ Նրա անուշ բուրմունքին:

ԹԱԽԾԱԼԻ ԱՇՈՒՆ

Աշունն արդեն իմ հոգում Հարազատ է այնքան շատ... Տերևները դեղնագույն Մրտիս նման են՝ վիատ:

Թափվում են ծառերից Անձրևի հետ խշխշան, Որպես մահվան գալուստի Որպես ծնունդ մեծ նշան,

Իմ ծերությունն է հիմա, Կյանքս դարձել է աշուն, Ժամանակները հողմաձայն Կյանքիս թերթերն են քշում:

Գիտեմ, գալու է հաստատ Ջնեռն ահեղ, ցրտաշունչ, Էլ չեմ տեսնի աշխարհում Արև, գարուն, կյանք ու շունչ:

ԼԱԶԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ Հայկական բանակի պահեստի սպա՝ մայր, ԵՊԿ փականագործ, հեղափոխյ

Նորից հուշերն են դեգերում շվար, Մենակությունն է թափառում դրսում, Դատարկություն է, թափուր է, խավար, Աշունն անտարբեր արդեն չի մրսում:

Որտե՞ղ եմ հիմա օրերս խնդուն, Օրերս վառման, երգերս՝ թնդուն, Դալուկ աշունն է օրերս թերթում, Օրերս՝ դողոջ, օրերս՝ տրտում:

Յոթներանգ գարունն անցյալ է ու սին, Տարակ ծովերը՝ հեռավոր երագ, Գույները տարտամ, մշուշ է անդին, Ժամերն անպատու ու հոտող ավագ:

Երեկ մի՞ն է, այսօրը՝ անտես, Խարավակները լի է ապագան, Մուտ խոտտումների վեճ շքահանդես, Դրածոների հերթական շարան:

Մտքերը սնանկ, բախվում կատաղի, Անգոր են պոռթկալ խաբկանքի ծիրից, Ու գորշությունն է տղում ամեհի, Չկա ցնծության պահը բերկրայից:

Իմաստության բյուր կաճառներն անգամ, Չեն կարող ցրել տաղտուկն այս դաժան, Հաղթահանդես է բիրտ տգիտության, Որ հոխորտում են մարդիկ անարժան...

ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ, «Լուսակն» ամսագրի գլխավոր խմբագիր 30.09. 2019 թ. Երևան

ԺԱՂԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՊԿ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ. ԷՈՎ ԲԱՐՈՒՏՉԵՎԱ

1 Սանկտ-Պետերբուրգից ԵՊԿ գրադարանին, որպես ժառանգություն թողած հանձնեցին ևս մեկ գիրք՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի անվ. կոնսերվատորիայի երաժշտական քննադատության ամբիոնի բազմավաստակ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, ՌԿ Կոմպոզիտորների միության անդամ Էռա Սուրենի Բարուտչևայի «**О магии бегущего време-**

ни и о себе» վեջին հրատարակությունը: Այն հանձնեցին Հայաստան ժամանած առողջապահական հարցերով գիտաժողովի բժիշկներ, որոնց հետ էր նրա քույրը ամուսնու հետ միասին: Ձերն էր հանդիպումը ԵՊԿ գիտության գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու Ծովիմար Մովսիսյանի աշխատասենյակում, մեջբերեց նրա խոսքերը. «2019 թվականի ապրիլին

Սանկտ-Պետերբուրգի Ն. Ռիմսկի-Կորսակովի անվ. կոնսերվատորիայում Աշվեց երաժշտական քննադատության ամբիոնի բազմավաստակ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, Ռուսաստանի Դաշնության Կոմպոզիտորների միության անդամ Էռա Սուրենի Բարուտչևայի 85-ամյակը:

12

Ազնավուրի մանկության թաղամասում կտեղադրվի նրա կիսանդրին

Ի հիշատակ Շառլ Ազնավուրի մահվան առաջին տարեկիցին՝ հոկտեմբերի 1-ին Փարիզի քաղաքապետարանում կազմակերպվել էր հանդիսավոր ընդունելություն, որի ընթացքում «Ազնավուր» հիմնադրամը մեծ արտիստի կիսանդրին հանձնել է Փարիզի քաղաքապետարանին: Քանդակը շուտով կտեղադրվի փարիզյան այն թաղամասում, որտեղ անցել է Ազնավուրի մանկությունը: Արվեստի գործը ստեղծել է հայ քանդակագործ Ալիսա Մելիքյանը 1964 թվականին՝ Ազնավուրի՝ Հայաստան կատարած առաջին այցի ժամանակ: «Ազնավուր» հիմնադրամը բարձր է գնահատում Փարիզի քաղաքային իշխանությունների՝ քանդակը քաղաքի սրտում տեղադրելու պատրաստակամությունը, ինչը հնարավորություն կտա Ֆրանսիայի մայրաքաղաքի բնակիչներին ու այցելուներին զգալ Ազնավուրի «ներկայությունը»: Կիսանդրու հանձնման արարողության ընթացքում ելույթ է ունեցել «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր Նիկոլա Ազնավուրը, որն իր խոսքում նշել է. «Շառլ Ազնավուրը սերտորեն կապված է Փարիզի հետ, և հիմնադրամն անկեղծորեն երախտապարտ է Փարիզի քաղաքապետարանին՝ այս միջոցառման ու հետագայում կիսանդրին տեղադրելու հարցում ցուցաբերած մեծ պատրաստակամության և աջակցության համար»: Կիսանդրու հանձնման արարողությանը ներկա են եղել Ազնավուրի ընտանիքի անդամները, ընկերներ, ֆրանսիացի պաշտոնյաներ և հայ համայնքի ներկայացուցիչներ: Նշենք նաև, որ Շառլ Ազնավուրի փարիզյան առաջին բնակարանի պատին բացվել է մեծ արտիստի հուշատախտակը: Հիշեցնենք, որ 2019-ի մայիսին հուշատախտակ էր բացվել Ազնավուրյանների՝ փարիզյան առաջին բնակարանի շենքում, իսկ ամիսներ անց նախատեսվում է նաև արտիստի արձանի տեղադրումը Ֆրանսիայի մայրաքաղաքում: «Ազնավուր» հիմնադրամը նախաձեռնում և համակարգում է այս իրադրությունները՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ պահպանել ու տարածել լեգենդար արտիստի հարուստ մշակութային ժառանգությունը:



Շառլ Ազնավուրի կիսանդրին

խմբագրական
Նյութը վերցված է
<https://www.aravot.am/2019/10/02/1069652/>
կայքից

Մուլրակի դիրիժորը կրկին կյանք տվեց հայկական հնչյունին

Նվիրական «Վալերի Գերգիև» անունը հայ իրական ունկնդրի համար ուրիշ արժեք ունի: Մենք, որ ուսանողական մեր տարիներին սովոր էինք Մեծ դահլիճում ֆիլիարմոնիկ նվագախմբի դիրիժոր երիտասարդ Վալերի Գերգիևին տեսնել անընդհատ, ամեն անգամ հայ ժամանակակից կոմպոզիտորների, երբեմն մի համերգի մեջ՝ մի քանի պրեմիերա կատարելիս, չէինք պատկերացնում, որ տաղանավոր ու նպատակալաց այս դիրիժորը կարճ ժամանակ անց, Հայաստանից հեռանալուց հետո պիտի դառնա աշխարհի ամենապահանջված, ամենադիմանիկ գրաֆիկոլ, ամենաանհատական ու ամենաստեղծագործ դիրիժորը: Թեև Ղազարոս Սարյանը դա կանխատեսում էր: Ցավում են, իհարկե, որ երկար սպասված այս վերադարձին ներկա էին քաղաքի փայլուն երաժիշտներից ու իրական երաժշտասերներից հաշված թվով մարդիկ: Այլապես, հանդիսատեսի արծազանքը կլիներ անհավանական տաք: Այնուամենայնիվ, սա ֆանտաստիկ երևույթ էր մեր մշակութային կյանքում, որի մասին, կարծես, չխոսվեց ամիրաժեշտ աղմուկով: Իրականում, անհավանական էր լսել մասետրոյի անմիջական խոսքը մարդասիրական «Ավորա» ձեռնարկի, իր կյանքում հայ մարդկանց խաղացած դերի, Հայաստանի հոգեհարազատության մասին, լսել, թե ինչպես է նա նվագախմբի զույներով կենդանացնում Ղազարոս Սարյանի «Պաննոն», Էդվարդ Միրզոյանի Սիմֆոնիայի թաքնված երանգները, Արամ Խաչատրյանի դաշնամուրի Կոնցերտը կատարելիս՝ երկխոսում տաղան-



Վալերի Գերգիև

դաշատ Հայկ Մելիքյանի հետ ու ստեղծում նոր իմաստներ, վայելել, թե ինչպես է գեղանկարիչ դիրիժորը վերստին «նկարում» ու «ծեփում» Մուսորգսկու կերպարները: Երջանկություն ունեցա նաև հետևել Գերգիևի աշխատանքին, երբ օդանավակայանից անմիջապես դահլիճ ժամանած դիրիժորը նվագախմբի հետ կատարում էր համերգին նախորդող միակ փորձը: Պրոֆեսիոնալների համար սա վար-

պետության սանդղակ չունեցող դաս էր, որ կարող էին մեր գործող դիրիժորները ևս դիտել, հպարտանալ, որ դիրիժորական արվեստի հսկան՝ բեմի ետնամասում ծվարած, վայելում ու հետևում էր Հայկ Մելիքյանի արարած «Շուշիկի» ու դելալյանական Նվիրման վարպետությանն ու երաժշտականությանը: Եվ կամ բեմում կանգնած լուռ ու հուզական լսում «Կռունկ»ի կատարման մանկական թրթռու, հիանալ Գերգիևի վաղեմի բարեկամ, մեծ հայ՝ Ռուբեն Վարդանյանի համեստությամբ ու մանկական անմիջականությամբ, կյանքի իրական արժեքները գնահատելու նրա անհավանական տաղանդով: Երագում են, ավելի ճիշտ, ուզում են, որ դադարենք կարևորել մեղ, տեղական, մանր ու նեղանձնյա, ժամանակավոր ու էժան հարաբերությունները: Տարածք ու կյանք տանք մեր ժողովրդին հատուկ տաղանավոր ու համամարդկային երևույթներին: Մեր հայրենակիցներին և այլազգի բարեկամներին գնահատենք այսօր՝ անմիջապես, մինչ նրանց կփառաբանի աշխարհը: Մեր ներուժն ու խելքը հաստատ ի վիճակի է դա զգալ:

խմբագրական
Նյութը վերցված է
<https://www.aravot.am/2019/10/23/1073763/>
կայքից

«Արվեստն ու երաժշտությունը կյանքի որակ են փոխում»

«Աշխարհում այսօր շատ են խոսում խնդիրներից, արվեստից, գաղափարներից, նոր մտքերից, և կան ինչ-որ բաներ, երբ միավորվում են, արդյունք է ստացվում: Հայաստանում կարևորում ենք դասական երաժշտությունը և արվեստը, որը մեր գեղունակ, արվեստով ենք ներկայանում աշխարհին», - հոկտեմբերի 5-ին The LOFT-ում կայացած «Դաս A. տեխնոլոգիաները և երաժշտությունը» խորագրով հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, որը ղեկավարելու է WCIT համաշխարհային նվագախումբը: Մասնորոն պատմեց, թե ինչու է WCIT համաժողովը մեկնարկելու դասական երաժշտության համերգով և ինչու է ստեղծվել WCIT համաշխարհային նվագախումբը: «Ամենաբնականաբար թեման արհեստական բանականությունն է, բոլոր նորարարական մտքերը, ստարտափերն անդրադառնում են դրան: Երեսուն տարի առաջ ինտելեկտուալ մարդ էին համարում նրանց, որոնք ունեին գիտելիքներ... Օրինակ երբ է ծնվել Բախը, Մոցարտը կամ Շեքսպիրը, կամ երբ է գրվել այս գիրքը... Այսինքն ավելի տեղեկատվական դաշտն անվանում էինք ինտելեկտ: Ապա ստեղծվեց համացանցն ու գուգլը, և այժմ որեւէ մեկը նման մարդկանց կարիք չի զգա, քանի որ յուրաքանչյուրը ունեք ձեր գործիքը, որ սմարթֆոնն է կամ բջջային հեռախոսը, որով կարող եք համացանցով համապատասխան տեղեկատվություն



Սերգեյ Սմբատյան

ստանալ, ինտելեկտի պաշարի խնդիր չէք զգում: Ինտելեկտուալ մարդ հասկացությունը վերաբերում է նրան, թե մարդն ինչպես կարող է սինթեզել այն տեղեկատվությունը, որ ունի», - ասաց Սմբատյանը: Նա ներկայացրեց, թե ինչպես կարելի է ստանալ երաժշտություն արհեստական բա-

նականության շնորհիվ: «Նույնիսկ արհեստական բանականության զարգանալուն պես մարդիկ կարող են տեսնել, որ կատարողական արվեստը կարող է շատ ավելի առաջ գնալ ու փոխել բովանդակությունը», - նշեց դիրիժորը: Սերգեյ Սմբատյանի խոսքերով, «Արհեստական բանականությունը կարող է հասկանալ ցանկացած կոմպոզիտորի սիմֆոնիաները, և այդ ֆորմուլայի մեջ ստեղծել եւս մեկ սիմֆոնիա: Շատ կարելու է, որ այսօր այդ քայլն արվում է Հայաստանում, դա մեզ համար մեծագույն ձեռքբերում է»:

Նրա խոսքերով, երաժշտությունը մարդու ուղեղի վրա ավելի մեծ ազդեցություն է թողնում, քան արվեստի ցանկացած այլ տեսակ: «Օրինակ՝ Բուռնիչե-լիի նկարը տեսնելու պարագայում փառաբանվելու էՖեկտն ավելի քիչ է, քան երաժշտություն լսելու դեպքում», - օրինակ բերեց մասնորոն: Ապա հավելեց. «Երաժշտությունը ենթագիտակցության վրա մեծ ուժ ունի, արվեստը, դասական երաժշտությունը կարող են կյանքի որակ փոխել... Մոցարտը, Ռիմսկի Կորսակովը ուժ է, էներգետիկ պաշար է, որ մտնում է ձեր մեջ»:

ԳՐՈՒՐ ՀԱՎԿՐՅԱՆ
<https://www.aravot.am/2019/10/05/1070213/>

ՄԵՉ ԾԱՆՈՑ - ԱՆԾԱՆՈՑ ԿՈՄԻՏԱԿԱՆ «ՏԱՂԱՐԱՆԻ» ՀԱՄԵՐՈՒՄ

ԱՆՉԱՅՏ ԿՈՄԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՐՅԱ ԴԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3

Բարու հաղթանակի անիրական հույսով են լեցուն XIX դ. գերմանացի ակադեմիկոս Բանաստեղծ Յան Թեոդոր Շթրոմի գեղարվեստական երկերը, որի քննարկական հերոսը բնության գրկում խաղաղ ու ներդաշնակ կյանքով ապրող մարդն է: Այդ ներդաշնակության բաղձանքն էր արդյոք, թե բանաստեղծի ռոմանտիկական տողերի գրավչությունը, որ Կոմիտասն ընտրեց նրա գործերից մեկը՝ մեղեդավորելու համար:

Իսկ գուցե Կոմիտասին դեպի Թեոդոր Շթրոմի ստեղծագործություն էր տարել վերջինիս բանաստեղծական նյութից կազմված ժողովածուն: XIX դ. կեսերին Շթրոմը Թեոդոր և Թիլդա Մոմգեն եղբայրների հետ հավաքել և 1843 թ. հրատարակել է շվեդիկ-հոլանդական ժողովրդական երգերի մի ժողովածու՝ «Երեք բարեկամների երգերի գիրք» խորագրով, որում տեղ էին գտել նաև Շթրոմի բանաստեղծությունները:

Աշխարհի ժողովուրդների երգարվեստին ու առանձնահատկություններին ծանոթանալու՝ Կոմիտասի ծգտումը հասցրել է իրեն նաև դեպի գերմանական ազգային երաժշտարվեստի արմատների քննում, ինչին նպաստել է Շթրոմի աշխատությունը: Իսկ գերմանացի պոետի «Ապրիլ» վերնագրված քերթվածքը ոգեշնչել է նրան երգ գրելու, որն էլ հնչեց «Տաղարան»-ի համերգի 1-ին մասում: Կոմիտասյան ստեղծագործության անհայտ էջերից է նաև «Ապրիլ»-ը, որ հնչեց Չայկովսկու «Վերջին օրերի» համերգում: Խոսքի վերջին «Ապրիլ»-ը գրելիս՝ ի՞նչ կարող էր իմանալ կոմպոզիտորը, որ պիտի զար մի այլ՝ աղետալի ապրիլ՝ աղճատելով երգ ու ծգտում, կհաստ թողնելով մի ամբողջ կյանքի գործ...:

Երգի տողերի հեղինակ Թ. Շթրոմը, 1881-ին Բիսմարկի քաղաքականությունից հիասթափված, հեռացել է Պոտսդամից և բնակություն հաստատել գյուղում՝ կյանքի վերջին տարիներն անցկացնելով խաղաղության մեջ: Նրա խաղաղավետ-խոստովանող տողերը եղանակավորող Կոմիտասն իր կյանքի վերջին քսան տարիները պետք է անցկացներ խոստովանող ու պաշտելի Չայրենիքից հեռու՝ փարիզյան հոգեբուժարանի անհուսության մեջ...:

Նույն ազգանունը կրող գերմանացի մեկ հեղինակի՝ Յուլիուս Շթրոմի տողերով գրված կոմիտասյան «Արի, օ՛, գիշեր» երգը՝ քննարկական-երազային, կատարեց Յոզեֆ Նշանյանը: Գերմանական շրջանի ստեղծագործության «երաժշտական բնակարանների» շարքից է Լյուդվիգ Ուլանդի խոսքերով գրված «Գարնան գովեստը»: Յ. Նշանյանի կատարմամբ այն հնչեց իբրև գործով լեցուն սիրերգ, իբրև խնկարկում: Երիտասարդ կոմպոզիտորը որքան՝ երազներ ուներ, որքան՝ հեռահար նպատակներ՝ դա գրելիս: Եվ այն ունկնդրեցի՝ ոչ միայն որպես զուտ երաժշտական երկ, այլ որպես ջահել հոգու անասանակների ծգտում, որ պիտի վեր էլներ ու վեր տաներ ուրիշներին...:

Գերմաներենով գրված մի այլ գարնան երգ էլ կատարվեց՝ Նիկոլաուս Լենաուի խոսքով: Երգչական քառյակի ծայրահայտում «Գարունը» գաթոնը ու հոգիների խնդրության հունչն ուներ: Իսկ նույն հեղինակի տողերով կոմիտասյան «Մառախուղ», Լուսինե Մարկոսյանի երգեցողությամբ, տարբեր նախորդից դրամատիկ խորքայնությամբ, հաղորդում էր մի տեսակ անընդգրկելի տարածականության զգացողություն, ուներ մառախուղի լողացող-հագիվ նշմարելիության արտահայտություն:

«Դու հարցնում ես» ռոմանսը՝ գրված Իոաննա Աբրոգի-

ուսի խոսքերով, ներանձնական բնույթի մի ստեղծագործություն է, մենագրույց, որ Գ. Ղամբարյանի ծայրով հնչեց եվրոպական մշակույթին հատուկ նրբագեղությամբ:

Ի՞նչ գերմանական պոետիկա՝ առանց Գյոթեի գրական ժառանգության: Եվ դրան պիտի որ անդրադառնար Կոմիտասը՝ գրելով «Մարդկային զգացմունքներն» ու «Գիշերերգը»: Առաջինը կատարեց վոկալ քառյակը (Լ. Մարկոսյան, Պ. Քարազյան, Յ. Նշանյան, Գ. Ղամբարյան), իսկ երկրորդը ծայրի խորքային դրամատիկ ընդգծվածությամբ մեներգեց Լուսինե Մարկոսյանը:

Լինելով նուրբ գեղագետ՝ Կոմիտասը, եվրոպական երաժշտության հարուստ փորձն օգտագործելով, ելնելով հարմոնիզացիայի ընդհանուր սկզբունքներից և հիմք ընդունելով դասական պարզ ֆունկցիոնալ հարմոնիան, այն մեծագույն զգուշությամբ կիրառել է նաև հայ ժողովրդական երաժշտության իր ներդաշնակումներում: Նա համարել է ժողովրդական երաժշտական մտածելակերպը, հայկական գեղջկական երգի բարդ ու նրբին երանգները եվրոպական հարմոնիայի սկզբունքներին: Հայ ժողովրդական լադային հիմքի վրա Կոմիտասը ստեղծել է իր հարմոնիան, որը դարձել է նրա՝ ազգային կերպարանը պահպանելու արտահատչամիջոց:

«Տաղարանի» համերգային երեկոյի 2-րդ մասն արդեն մեր երաժշտական մշակույթի գանձարանի այն գործերն էր ընդգրկում, որոնցով սովորաբար ճանաչում ենք Կոմիտասին: Դրանց մեծ մասը մեծ վարպետությամբ մշակվել ու գործիքավորվել են Սեդրակ Երկանյանի կողմից: «Քելեր ցուլեր» և «Ջար զընզը», «Չեմ կրնա խաղա», «Ես սարեն կուգայի», «Քելե, քելե», «Տուն արի» գեղջկական սիրերգերը վկայում են, որ ժողովրդական երաժշտությունը Կոմիտասի համար իրականության և մարդու մասին հնչյուններով արտահայտված ժողովրդի մտքերն են: Դրանք շարժուն, կենդանի, հարաճուն կերպարներ են, որ ներկայացվեցին «Տա-



«Տաղարան» անսամբլ, դիրիժոր Սեդրակ Երկանյան

ղարանի» երգչական կազմի և երաժիշտ-մենակատարների կողմից: Ժողովրդական երգերը, անցնելով Կոմիտասի ստեղծագործ գրչով, նոր որակ և գունավորում են ստացել: Արտահայտչական միջոցներով հարստացվելով հեղինակի կողմից՝ դրանց մեծ մասը խորիմաստ, գեղարվեստական կերպարներ դրսևորող երաժշտական բաժրարվեստ ստեղծագործություններ են դարձել՝ պարունակելով ազգագրական տարբերակի մայր եղանակը:

«Գարուն ա» ժողովրդական իմաստուն խոսքերն իրենց արտահայտությունն են գտել նույնչափ խորունկ, դրամատիկականությամբ հագեցած երաժշտական կերպարում, որ կերտել է Կոմիտասը: Բնության անսպասելի արհավիրքին

զուգահեռվում է սիրո կորուստն ապրող մարդու վիշտը, և այս համադրումը հզորացնում է երգի դրամատիկ հնչողությունը: Ինքը՝ Կոմիտասը, «Գարուն ա» երգում էր զուսպ արտահայտչականությամբ, անկեղծ, վշտալի. այս կերպ էլ այն հնչեց «Տաղարանի» համերգին: Նույնկերպ և կոմիտասյան «Կռունկը», որ մեղեդային հուզականության ամբողջ գրավչությամբ արտահայտում է հայրենակարոտ, թախծող մարդկանց հոգեկան ապրումներն ու կարոտագին զգացմունքը:

«Չինար ես»-ը, որ Կոմիտասի քնարական գեղեցիկ երգերի շարքից է, իսկ դրա մեղեդու փոխադրումը թավջութակի և նվագախմբի համար, մի այլ՝ հուզական հունչ ունի: Եվ այն կատարեց երիտասարդ թավջութակահար Յենրի Սեդրակի Երկանյանը:

«Ես գիշեր, լուսնյակ գիշեր»՝ զուլալ մեներգեց Գալինա Յուլայանը, «Քելե, քելե» կանչեց, ու հանդիսականի առջև բացվեց պարզ, անպաճույճ մի աշխարհ, ուր մարդն ու բնությունը ներդաշնակ են, անաղճատ... «Ծիրանի ծառ, բար մի տա», ծայրով ոգորեց Պերճ Քարազյանը, ու սարերն, ասես, տեղահան եղան, ծորերը արծազանքեցին մարդու ցավին... Բլուլահարուհի Յասմին Մուրադյան-Չարությունյանի շուրթին կոմիտասյան ամենասիրելի նվագարանը հունչ արծակեց, ու հոսեց մեղեդին զարնան պարզկա առավոտների զուլալությամբ. և մի «Գարուն»՝ այս անգամ հայ ժողովրդական մեղեդայնությամբ: «Քելեր ցուլերն» ու «Ջանգ զընզը» էլ կենդանի հունչ առան Արտակ Ասատրյանի դուդուկով:

Միս այսպիսին է Կոմիտասի երաժշտության ազդեցությունը: Համերգից տպավորությունն անկարագրելի էր, մանավանդ, որ ուղեկցվեց մասետրո Սեդրակ Երկանյանի խոսքով՝ Կոմիտաս վարդապետի կյանքի, գործի ու մեր մշակույթում դերի վերաբերյալ: Մասետրոյի խոսքը թեև համառոտ, բայց ազդու էր, ուսանելի ու պոետիկ:

«Տաղարանի» հարուստ ու բազմաբովանդակ համերգը եզրափակվեց «Հայաստան, երկիր դրախտավայրի» հնչյունով, որ Հայոց յուրակերպ ու բոլոր ժամանակներին սազական հիմներգ է:

Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս օրրան,
Դու՛ և բնիկ իմ Հայրենիք,
Հայաստան, Հայաստան...

«...Ոչ ոք, ի բացառյալ նուրբ գիտակներից, պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որն ըստ էության ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ», - մեջբերում է ֆրանսիացի նշանավոր երաժշտական քննադատ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Լուի Լալուանի տպավորությունները, որ գրի է առել 1906-ին Փարիզում Կոմիտասի համերգից հետո:

- Սքանչելի, քաղցրահնչուն, խորապես հուզական, չափավոր քնքուշ այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտուն: Եկուն ու կենդանի ռիթմերի առատությամբ հարուստ երաժշտություն է դա՛ կարծեք՝ հենց սրտի խորքից հոսելիս լինի՝ որպես սառնորակ, վճիտ, արևաշող հոսանք...»: Այս խոսքերը նույն անկեղծությամբ սազական են «Տաղարան»-ի համերգին, որում կոմիտասյան սերն ու հավատն էր դեպի լուսավորը, դեպի կյանքը, որը հանձարեղ պարզության անգնահատելի գանձարանն էր բացում մեր հոգիները հարստացնելու համար...

ՀԱՄԱԿԱ ՍԱՐԳՅԱՆ
գրող, բանաստեղծ

« ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ »



Բարբարա Դենշեր

✓ Հոկտեմբերի 3-ին ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ հանդիպում ավստրիացի հայտնի հրապարակախոս, լեզվաբան և գրականագետ Բարբարա Դենշերի հետ: Ձեկույցը նվիրված էր Վիեննայի Օպերային թատրոնի հիմնադրման 150-ամյակին:

Բարբարա Դենշերը բազմիցս հյուրընկալվել է Հայաստանում, արվեստին և մշակույթին նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների հեղինակ է, որոնցից առավել հայտնի են «XX դարի մշակույթի, գիտության և հասարակական-քաղաքական հանրահայտ ավստրիացի գործիչները», «The History of the Printing House of the Mekhitarist Congregation in Vienna» և այլն:

✓ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատոր-



Իրին Յոսուկե

ի հիմնադրումը և Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, Համազգային հայ կրթական և մշակութային միության Երևանի գրասենյակի նախաձեռնությամբ, տեղի ունեցավ «Ծիրանավառ գիշերների օրորը» խորագրով համերգային երեկոն՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին: Ծրագրում ներկայացվեցին Կոմիտասի, Բարսեղ Կանաչյանի և Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործություններից: Հանդես եկան օպերային երգիչներ Նարինե Անանիկյանը, Դիանա Հարությունյանը,

Անդրանիկ Մախասյանը և Հովհաննես Անդրեասյանը: Համերգային երեկոյի կոնցերտմասերն էր Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը:

Հրեյլանական հանդիսության մեկնարկին Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ղեկավար Տաթևիկ Շախկույանը ներկայացրեց Կոմիտասի ժառանգության մասին զեկույց:

Կոմիտասյան գործերի կողքին Կոմիտասի աշակերտների՝ Բարսեղ Կանաչյանի և Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործությունների մատուցումը յուրատեսակ նախաձեռնություն էր հյրերկյանական միջոցառումների շրջանակում, քանի որ երկու կոմպոզիտորներն էլ աշակերտել են Կոմիտասին և նրան համարել հայ երգի ու երաժշտության զագաթը՝ մշտապես ոգեշնչված լինելով կոմիտասյան հանձարով:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

✓ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Բաբախանյանին սաների՝ Արմեն Պուլչինյանի և Արթուր Գրիգորյանի՝ Ռիգայի երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթին հաղթելու կապակցությամբ:

Պատրաստեց՝
ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ

